Գիրքը տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 41100 օրինակ, 92 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

## Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ
2009

ՀՏԴ 373:941:(479.25)
ԳՄԴ 74.2+63.3(2հ)
Հ 282

*Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից*

Կազմողներ`

**ՅՈՒՐԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ** - խմբի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

**ՍԵՎԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ** - խմբի ղեկավարի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու, ԳԹԿ

**ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ

**ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ** - պատմական գիտությունների թեկնածու, ԿԱԻ

**ԳՈՀԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ** - ուսուցչուհի, Երևանի թիվ 186 դպրոց

**ԳՈՀԱՐ ՀԱՐՅԱՊԵՏՅԱՆ** - ուսուցչուհի, Երևանի թիվ 4 դպրոց

Խմբագիրներ` ՅՈՒՐԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍԵՎԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Հ 282 Հայոց Պատմություն : Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2009. 92 էջ:

ԳՄԴ 74.2+63.3(2հ)

ISBN 978-9939-805-67-2

©ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


1. Նախաբան.........................................................................3
2. Թեստի կառուցվածքը..........................................................4
3. Թեստի բովանդակությունը...................................................6
4. Բովանդակային դասիչ.........................................................8
5. Թեստի թեմատիկ-բովանդակային բաշխումը.....................30
6. Բացատրություններ առաջադրանքների կատարման վերաբերյալ..........................................................................31
7. Թեստ 1...............................................................................38
8. Թեստ 1-ի պատասխանները ..............................................60
9. Թեստ 2...............................................................................61
10. Թեստ 2-ի պատասխանները.............................................82
11. Պատասխանների ձևաթուղթը...........................................83
12. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը...................84
13. Հանձնարարվող գրականություն......................................85






# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Քննական թեստի միջոցով իրականացվում է հանրակրթական դպրոցների շրջանավարտների գիտելիքների գնահատումը «Հայոց պատմություն» առարկայից՝ ամփոփիչ ատեստավորման և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու վկայագիր տրամադրելու նպատակով:

«Հայոց պատմություն» առարկայի ուղեցույցի նպատակն է հստակեցնել քննական առարկայի թեմատիկ-բովանդակային սահմանները, որոնք ուղենիշ պիտի ծառայեն շրջանավարտների, դիմորդների, ինչպես նաև թեստեր կազմողների համար: Ուղեցույցում հիմնականում լուսաբանված են հետևյալ հարցերը. թեստի կառուցվածքը, բովանդակային դասիչը, թեմատիկ-բովանդակային բաշխումը, առաջադրանքների կատարման վերաբերյալ բացատրություններ, պատասխանների ձևաթղթի լրացման կարգը:

Թեստում պահպանվում է առաջադրանքների նույնատիպության՝ ընտրովի պատասխաններով առաջադրանքների սկզբունքը:

Սույն ուղեցույցը լուսաբանում է թեստերի բովանդակությունը, պարզաբանում առաջադրանքների յուրահատկությունները, ինչպես նաև օգնում հաղթահարելու դրանց լուծման հնարավոր դժվարությունները:

# ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը պարունակում է ընտրովի պատասխաններով 80 առաջադրանքներ: Այն կազմված է Ա և Բ մակարդակներից: Ա մակարդակը պարունակում է 50 առաջադրանք (1 - 50), իսկ Բ մակարդակը` 30 առաջադրանք (51 - 80):

Ամփոփիչ ատեստավորման համար հանրակրթական դպրոցի շրջանավարտների պատրաստվածության մակարդակը ստուգվում է Ա մակարդակով, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու վկայագիր ստանալու համար` Ա և Բ մակարդակներն ընդգրկող միասնական տարբերակով:

Քննական թեստում առաջադրանքներն ըստ տիպերի դասակարգված են հետևյալ սկզբունքով.

Ա մակարդակում`

- տարեթվերի իմացություն,
- փաստերի և երևույթների իմացություն,
- պատմական տերմինների և հասկացությունների իմացություն,
- պատմական իրադարձությունների ու երևույթների պատճառների և հետևանքների իմացություն,
- դեպքերի հաջորդականության իմացություն,
- աշխատանք սկզբնաղբյուրների հետ,
- համապատասխանեցում:

Բ մակարդակում առաջադրանքների դասակարգումը կատարվել է գրեթե նույն սկզբունքով: Միակ տարբերությունն այն է, որ Ա մակարդակի առաջին երկու տիպի առաջադրանքների փոխարեն մտցվել է նոր տիպի առաջադրանք, որը դիմորդից պահանջում է պատմական փաստերի համադրման և խմբավորման ունակություն:





## Հանձնարարվող գրականություն

1. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ, Եր., 2005

2. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ, Եր., 2005

3. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ, Եր., 2005

4. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ, Եր., 2005

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված են չորս վանդակներ: Առաջադրանքի ճիշտ պատասխանը ձևաթղթում անցկացնելու համար տվյալ համարին համապատասխան վանդակում անհրաժեշտ է դնել «**X**» նշանը: Օրինակ՝

**9** Ծովի մակերևույթից ի՞նչ միջին բարձրություն ունի Հայկական լեռնաշխարհը:

1) 1000-1200 մ.
2) 1300-1400 մ.
3)1500-1800 մ.
4) 2000-2400 մ.




*Եթե դիմորդը ցանկանում է ուղղել իր սխալ նշումը, ապա պատասխանների ձևաթղթում* **<u>«Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը»</u>** *հատվածում պետք է գրանցի առաջադրանքի համարը և կատարի նոր նշում՝ հետևյալ ձևով.*








Ա և Բ մակարդակներում առաջադրանքների տիպերը ներկայացված են հետևյալ համամասնությամբ.

| Առաջադրանքների տիպերը | Ա մակարդակ | Բ մակարդակ |
|---|---|---|
| • տարեթվերի իմացություն | 12 (1-8, 23-26) | |
| • փաստերի ու երևույթների իմացություն | 14 (9-16, 27-30, 41-42) | |
| • պատմական տերմինների և հասկացությունների իմացություն | 4 (17-18, 31-32) | 4 (53-54, 70-71) |
| • պատմական իրադարձությունների ու երևույթների պատճառների և հետևանքների իմացություն | 4 (33-34, 43-44) | 6 (55-57, 72-74) |
| • դեպքերի հաջորդականության իմացություն | 8 (19-22, 35-36, 45-46) | 6 (58-61, 75-76) |
| • աշխատանք սկզբնաղբյուրների հետ | 4 (37-38, 47-48) | 5 (62-64, 77- 78) |
| • համապատասխանեցում | 4 (39-40, 49-50) | 5 (65-67, 79-80) |
| • պատմական փաստերի համադրում և խմբավորում | | 4 (51-52, 68-69) |

## ԹԵՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեստում ընդգրկված առաջադրանքները ներառում են 10-ամյա դպրոցի 5-8-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի դասագրքերում ամփոփված ծրագրային նյութը:

Նման մոտեցումը թելադրված է նրանով, որ ակնհայտ տարբերություններ կան «Հայոց պատմություն» առարկայի դպրոցական հին և նոր ծրագրերի միջև, իսկ դրանց հիման վրա ստեղծված դասագրքերն էլ որոշ դեպքերում տարբերվում են ինչպես իրադարձությունների մեկնաբանություններով, այնպես էլ թեստավորման համար անհրաժեշտ փաստական նյութի ծավալներով: Հակասություններից և տարընթերցումներից խուսափելու համար բովանդակային դասիչը կազմվել է հայոց պատմության դպրոցական 1999 թ. ծրագրի և ակադեմիկոս Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ լույս տեսած «Հայոց պատմություն» 5-8-րդ դասարանների դասագրքերի հիման վրա: Քանի որ դրանք ունեցել են մի շարք հրատարակություններ, նպատակահարմար ենք գտել առաջնորդվել 2005 թ. լույս տեսած դասագրքով, որովհետև 2008-2009 ուստարվա շրջանավարտները հիմնական դպրոցի հայոց պատմության դասընթացն անցել են այդ դասագրքերով:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ դասագրքերում տեղ գտած որոշ նյութեր, մեկնաբանություններ ու ձևակերպումներ նույնպես տեղիք են տալիս տարընթերցումների և մասնագիտական տարակարծությունների, դասագրքերի այդ հատվածները չեն ընդգրկվել բովանդակային դասիչում:

Ելնելով այն բանից, որ «Հայոց պատմություն» առարկայից հանրակրթական դպրոցի պետական ամփոփիչ ատեստավորման և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու վկայագիր տրամադրելու նպատակով թեստային քննություն առաջին անգամ է անցկացվելու, ինչը, նախկինի համեմատ, նկատելիորեն ընդլայնում է քննական պարտադիր ծրագրային նյութի բովանդակային շրջանակները, բովանդակային դասիչում չեն ընդգրկվել նաև մի քանի թեմաներ, որոնք, մեր կարծիքով, մեծ կարևորություն չունեն:

Փոխարենը «Աշխատանք սկզբնաղբյուրների հետ» տիպի առաջադրանքներն ավելի բազմազան դարձնելու նկատառումով դրանք կազմելիս կարող են օգտագործվել նաև բովանդակային դասիչում ընդգրկված թեմաների վերաբերյալ դասագրքերում տեղ գտած լրացուցիչ դիդակտիկ նյութերը (պատմիչների ու այլ





## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ




### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Դիմորդը կարող է թեստ-գրքույկի դատարկ մասերում սևագրություն կատարել: Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը, որի ճիշտ լրացումից է նաև կախված դիմորդի քննական միավորը:*

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

| ԹԵՍՏ 2 | | | |
|---|---|---|---|
| Ա մակարդակ | | | |
| 1 | 2 | 26 | 1 |
| 2 | 3 | 27 | 3 |
| 3 | 1 | 28 | 3 |
| 4 | 4 | 29 | 3 |
| 5 | 3 | 30 | 4 |
| 6 | 3 | 31 | 2 |
| 7 | 4 | 32 | 1 |
| 8 | 2 | 33 | 3 |
| 9 | 2 | 34 | 3 |
| 10 | 2 | 35 | 3 |
| 11 | 3 | 36 | 3 |
| 12 | 3 | 37 | 2 |
| 13 | 2 | 38 | 3 |
| 14 | 2 | 39 | 4 |
| 15 | 3 | 40 | 2 |
| 16 | 4 | 41 | 2 |
| 17 | 3 | 42 | 3 |
| 18 | 1 | 43 | 2 |
| 19 | 2 | 44 | 2 |
| 20 | 2 | 45 | 3 |
| 21 | 2 | 46 | 1 |
| 22 | 1 | 47 | 3 |
| 23 | 4 | 48 | 3 |
| 24 | 3 | 49 | 3 |
| 25 | 2 | 50 | 3 |

| ԹԵՍՏ 2 | | | |
|---|---|---|---|
| Բ մակարդակ | | | |
| 51 | 1 | 66 | 2 |
| 52 | 1 | 67 | 2 |
| 53 | 1 | 68 | 3 |
| 54 | 2 | 69 | 2 |
| 55 | 3 | 70 | 1 |
| 56 | 3 | 71 | 2 |
| 57 | 4 | 72 | 3 |
| 58 | 1 | 73 | 4 |
| 59 | 3 | 74 | 4 |
| 60 | 3 | 75 | 1 |
| 61 | 2 | 76 | 2 |
| 62 | 2 | 77 | 4 |
| 63 | 1 | 78 | 4 |
| 64 | 2 | 79 | 3 |
| 65 | 4 | 80 | 3 |





հեղինակների վկայություններ և գնահատականներ, զանազան փաստաթղթերից ու վավերագրերից բերված հատվածներ):

Դասագրքերում որոշ դեպքերում առկա են ակնհայտ տարբերություններ բուն տեքստերում օգտագործված տարեթվերի և գրքի վերջում զետեղված «Կարևոր դեպքերի ժամանակագրություն» խորագրով ցանկերի միջև: Տարընկալումների տեղիք չտալու համար ժամանակագրական բնույթի թեստային առաջադրանքներին պատասխանելիս շրջանավարտը պետք է հիմք ընդունի բացառապես դասագրքերի բուն տեքստերում տեղ գտած տարեթվերը:

# ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԴԱՍԻՉ

## Հայկական բնաշխարհը

Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի հայրենիք: Աշխարհագրական դիրքը և բնական սահմանները: Մասիս և Արագած լեռները: Արարատյան դաշտը: Գետերը և լճերը: Ճանապարհները:

Մեծ Հայք և Փոքր Հայք: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններ:

## ԲԱԺԻՆ 1-ԻՆ. ՆԱԽՆԱԴԱՐ

### Նախնադարյան հասարակությունը Հայկական լեռնաշխարհում

Քարի դարը Հայկական լեռնաշխարհում. հին քարի դար, միջին և նոր քարի դար, պղնձի և քարի դար:

Քարի դարի մարդու բնակատեղիները, զբաղմունքը, գործիքները:

Մարդկային հոտեր, տոհմական համայնքներ, ցեղեր, ցեղային միություններ:

Առաջին պետությունները:

Բրոնզի դարը Հայկական լեռնաշխարհում: Նախնադարյան կարգերի քայքայումը: Երկաթի դարի սկիզբը:

## ԲԱԺԻՆ 2-ՐԴ. ՀԻՆ ՇՐՋԱՆ

### Վանի թագավորությունը (Ք. ա. 9-6-րդ դդ.)

Վանի թագավորության սկզբնավորումն ու ամրապնդումը: Տուշպա-Վանը մայրաքաղաք: Վանի թագավորությունը Առաջավոր Ասիայի հզոր տերություն. Մենուա, Արգիշթի 1-ին, Սարդուրի 2-րդ: Մենուախինիլի, Էրեբունի և Արգիշթիխինիլի քաղաքների կառուցումը:

Պայքար արտաքին ուժերի դեմ: Ռուսա 2-րդ: Վանի թագավորության անկումը:

Պետական կարգը, բանակը:

### Երվանդականների համահայկական պետությունը

Պարույրը հայոց թագավոր: Երվանդական արքայատոհմի հիմնադրումը, համահայկական պետության ստեղծումը: Երվանդ Սակավակյաց: Հայ-պարսկական դաշինքը, Տիգրան 1-ին և Կյուրոս Մեծ: Հայերի ապստամբությունը Դարեհ 1-ինի դեմ: Բեհիսթունյան արձանագրությունը և Հայաստանը:

Հայաստանն Աքեմենյան Պարսկաստանի սատրապություն: Քսենոփոնի «Անաբասիս»-ը Հայաստանի մասին:





**79** Համապատասխանեցնել իրադարձությունը, վայրը, տարեթիվը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Իրադարձությունը | N | Վայրը | N | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մխիթար Սպարապետի սպանվելը | 1 | Չավնդուր | 1 | 1699 թ. |
| 2 | Իսրայել Օրու նախաձեռնությամբ հրավիրված Սյունիքի մելիքների գաղտնի ժողովը | 2 | Խնձորեսկ | 2 | 1722 թ. |
| 3 | Հայկական և վրացական զորքերի հանդիպումը՝ Պետրոս 1-ինին դիմավորելու նպատակով | 3 | Հալիձոր | 3 | 1727 թ. մարտ |
| 4 | Թուրքերի դեմ Դավիթ Բեկի տարած խոշոր հաղթանակը | 4 | Անգեղակոթ | 4 | 1725 թ. մարտ |
| | | 5 | Չոլակ | 5 | 1730 թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 5 | 2 |
| 4 | 1 | 3 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 3 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 5 | 4 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 5 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 5 | 2 |
| 4 | 3 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 5 | 3 |
| 4 | 3 | 5 |

**80** Համապատասխանեցնել մշակութային իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը, վայրը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Մշակութային իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը | N | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մխիթարյան միաբանության հիմնադրումը | 1 | 1824 թ. | 1 | Սիմեոն Երևանցի | 1 | Ալեքսանդրապոլ |
| 2 | Ներսիսյան դպրոցի բացումը | 2 | 1912 թ. | 2 | Արմեն Տիգրանյան | 2 | Թիֆլիս |
| 3 | «Անուշ» օպերայի բեմականացումը | 3 | 1717 թ. | 3 | Ներսես Աշտարակեցի | 3 | Սուրբ Ղազար կղզի |
| 4 | Վանական դպրոցի հիմնադրումը | 4 | 1763 թ. | 4 | Մխիթար Սեբաստացի | 4 | Էջմիածին |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 3 |
| 2 | 4 | 1 | 2 |
| 3 | 1 | 2 | 1 |
| 4 | 3 | 4 | 4 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 3 |
| 2 | 3 | 1 | 2 |
| 3 | 4 | 2 | 4 |
| 4 | 1 | 3 | 1 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 3 |
| 2 | 1 | 3 | 2 |
| 3 | 2 | 2 | 1 |
| 4 | 4 | 1 | 4 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 3 |
| 2 | 2 | 1 | 2 |
| 3 | 4 | 2 | 1 |
| 4 | 1 | 3 | 4 |

**76** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Երևանում արհեստական կաուչուկի գործարանի հիմնադրման սկիզբը:
բ) Սումգայիթյան ողբերգությունը:
գ) Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշարձանի կառուցումը:
դ) «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» ԽՄԿԿ կենտկոմի որոշման ընդունումը:
ե) Արևմտահայերի 2-րդ համագումարը:
զ) Լոզանի կոնֆերանսը:
է) «Տրանսիլվանիա» նավով հայրենադարձների Բաթում ժամանելը:
ը) Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմավորումը:
թ) Սան Ռեմոյի կոնֆերանսը:
ժ) Հայաստանի կերպարվեստի թանգարանի ստեղծումը:

1) է, ե, գ, ը, ժ, ա, դ, բ, թ, գ
2) ե, թ, ը, զ, ա, ժ, է, դ, գ, բ
3) գ, դ, ժ, զ, բ, ա, ե, է, թ, ը
4) ե, զ, է, ժ, դ, գ, բ, ը, ա, թ

**77** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**
«Նա պատերազմեց շրջակա ազգերի դեմ և քաջաբար հաղթեց, ըստ իր անունի՝ առյուծաբար, որովհետև .................... առյուծ է նշանակում»:

*Հայոց ո՞ր արքայի մասին է խոսքը.*

1) Հեթում 1-ինի
2) Գագիկ 1-ինի
3) Արշակ 2-րդի
4) Լևոն 2-րդի

**78** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**
«Նա պատերազմեց շրջակա ազգերի դեմ և քաջաբար հաղթեց, ըստ իր անունի՝ առյուծաբար … »:

*Ո՞վ է տվել այդ բնութագիրը:*

1) Թովմա Արծրունին
2) Վարդան Արևելցին
3) Հովհաննես Դրասխանակերտցին
4) Կիրակոս Գանձակեցին





Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախացումը: Մեծ Հայքի և Փոքր Հայքի անկախ թագավորությունների ստեղծումը: Արմավիր և Երվանդաշատ մայրաքաղաքները: Սելևկյան տերությունը և Հայաստանը: Ծոփք-Կոմմագենեի թագավորությունը: Հայկական թագավորությունները Ք.ա. 3-րդ դարի վերջին:

**Մեծ Հայքի պետության վերելքը**

Երվանդական դինաստիայի անկումը: Մագնեսիայի ճակատամարտը և հայկական թագավորությունների անկախության վերականգնումը: Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը:

Արտաշես 1-ինը և հայկական հողերի միավորումը: Պայքար Սելևկյանների դեմ:

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Գյուղական կյանքի կարգավորումը: Այլ բարեփոխումներ:

**Հայաստանը հզոր աշխարհակալ պետություն: Տիգրան 2-րդ Մեծ**

Հայաստանը Արտաշես 1-ինի հաջորդների օրոք: Տիգրան 2-րդ Մեծի գահակալությունը: Ծոփքի միացումը և հայ-պոնտական դաշինքը: Տիգրանը և պարթևները: Տիգրանը և Սելևկյանները:

Տիգրան 2-րդի տերության տարածքը և բնույթը: Տիգրանակերտի հիմնադրումը:

Հռոմի առաջխաղացումը, հայ-հռոմեական պատերազմի առիթը: Հայ-հռոմեական պատերազմի սկիզբը: Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը: Հռոմեական զորքի վտարումը Հայաստանից: Տիգրան Կրտսերի ապստամբությունը: Պոմպեոսի ժամանումը Արևելք և արշավանքը դեպի Հայաստան: Արտաշատի պայմանագիրը:

**Պայքար Հայաստանի հզորության պահպանման համար: Արտաշեսյան դինաստիայի անկումը:**

Պարթևա-հռոմեական մրցակցությունը և Հայաստանը: Արտավազդ 2-րդի գահակալությունը: Կրասսոսի պարթևական արշավանքը և Հայաստանը: Անտոնիոսի պարթևական արշավանքը: Արտավազդ 2-րդի գերեվարությունը և մահը:

Արտաշես 2-րդը և Հայաստանի անկախության վերականգնումը: Ատրպատականի միացումը Մեծ Հայքին: Հայաստանը վերջին Արտաշեսյանների օրոք: Արտաշեսյան դինաստիայի անկումը:

### Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը (1-3-րդ դարեր)

Դրածո թագավորները Հայաստանի գահին: Հայ-պարթևական մերձեցումը: Տրդատ Արշակունի: Տասնամյա պատերազմը. Կորբուլոնի և Պետոսի արշավանքները: Հռոմեական բանակի պարտությունը Հռանդեայում: Տրդատ Արշակունին հայոց թագավոր: Տրդատ 1-ինի գործունեությունը:

Սանատրուկ Արշակունի: Վաղարշ 1-ին: Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը: Հայ Արշակունիները ժառանգական դինաստիա: Տրդատ 2-րդ: Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և Հայաստանը: Տրդատ 3-րդ: Մծբինի պայմանագիրը:

### Հին Հայաստանի տնտեսությունը, հասարակական և պետական կարգը

Գյուղատնտեսությունը: Արհեստագործությունը և առևտուրը: Դրամաշրջանառությունը:

Գյուղական համայնքը: Մասնավոր տնտեսությունները: Աշխատուժը:

Հին Հայաստանի քաղաքները և քաղաքային բնակչությունը:

Պետական կարգը. թագավորական իշխանությունը և գործակալությունները: Հին Հայաստանի տարածքը: Ստրատեգիաները և բդեշխությունները: Բանակը:

### Հին Հայաստանի մշակույթը

Հելլենիզմի դարաշրջանը և հելլենիստական մշակույթը:

*Նյութական մշակույթ:* Շինարարություն: Ճարտարապետություն, կերպարվեստ: Արտաշեսյան արքաների դրամները:

*Հոգևոր մշակույթ*: Հայերի հեթանոսական կրոնը: Հեթանոսական նոր պաշտամունքը: Հելլենիզմի ազդեցությունը հայկական դիցարանի վրա: Պատմական ավանդություններ: Թատրոնը: Օտար լեզուների կիրառումը:

## ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

## ԲԱԺԻՆ 1-ԻՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

### Ավատատիրությունը (ֆեոդալիզմ) Հայաստանում և քրիստոնեության ընդունումը

Ավատատիրության սկզբնավորումը: Ազատների և անազատների դասերը: «Հայրենիք»: Եկեղեցին ավատատեր: Գործակալությունները նախարարական տոհմերի սեփականություն: «Գահնամակ»: Աշխարհաժողովներ: Ավատական իշխանությունները և թագավորը: Քաղաքների վիճակը:





**73** **Թվարկված պատասխաններից ո՞ր երեքը չեն հանդիսացել Հայաստանում սելջուկ-թուրքերի տիրապետության հաստատման հետևանք.**

ա) Մեծապես տուժեց երկրի տնտեսությունը:
բ) Պայմաններ ստեղծվեցին հայկական մշակույթի վերելքի համար:
գ) Թուլացան կամ անկում ապրեցին հայկական տեղական թագավորությունները:
դ) Վատթարացավ գյուղացիների, արհեստավորների, առևտրականների վիճակը:
ե) Մեծ թափով ծավալվեց հայերի արտագաղթը դեպի Հնդկաստան:
զ) Նախադրյալներ առաջացան Հայաստանում կենտրոնական թագավորության վերականգնման համար:
է) Արագացավ հայկական ինքնուրույն իշխանությունների ստեղծման գործընթացը Կիլիկիայում:

1) բ, զ, է 2) գ, ե, զ 3) ե, զ, է 4) բ, ե, զ

**74** **Բերված պնդումներից ընտրել երեքը, որոնք արտացոլում են 1917 թ. փետրվարյան հեղափոխության անմիջական հետևանքները.**

ա) Տապալվեց ցարիզմը:
բ) Միապետությունից անցում կատարվեց դեպի ժողովրդավարություն:
գ) Վերացավ ժամանակավոր կառավարությունը:
դ) Ռուսաստանում հաստատվեց երկիշխանություն:
ե) Իշխանությունն անցավ ռազմահեղափոխական կոմիտեի ձեռքը:
զ) Ստեղծվեց Անդրկովկասի կոմիսարիատը:
է) Ընդունվեցին հողի և հաշտության մասին հրովարտակներ:

1) ա, բ, է 2) գ, դ, ե 3) ե, զ, է 4) ա, բ, դ

**75** **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Ճարմանայի
բ) Ձիրավի
գ) Ակոռիի
դ) Ավարայրի
ե) Արածանիի
զ) Մազնեսիայի
է) Հռանդեայի
ը) Տիգրանակերտի
թ) Գավգամելայի
ժ) Խառանի

1) թ, զ, ը, ե, ժ, է, բ, դ, գ, ա
2) զ, թ, ե, ը, է, ժ, դ, գ, բ, ա
3) ժ, է, ը, զ, թ, ե, գ, բ, ա, դ
4) է, ը, թ, զ, ե, ժ, դ, գ, ա, բ

**71** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) Հայկական Ազգային բյուրո
2) Ազգային պատվիրակություն
3) Հայոց ազգային խորհուրդ
4) Արևմտահայ ազգային խորհուրդ
5) Հայոց տուն

ա) Պողոս Նուբար փաշայի կողմից ղեկավարվող մարմին, որը կոչված էր տերությունների առջև պաշտպանելու արևմտահայերի շահերը:
բ) Արևելահայերի համագումարում ընտրված մարմին, որը հանդես էր գալիս որպես Անդրկովկասի հայության լիազոր ներկայացուցիչ:
գ) Թիֆլիսում գործող մարմին, որն Առաջին աշխարհամարտի տարիներին ղեկավարում էր կամավորական ջոկատների կազմակերպումը:
դ) Արևմտահայերի, առավելապես պոլսահայ համայնքի, ներքին խնդիրները կարգավորող մարմին:
ե) Ըստ «Որոգայթ փառացի»՝ ապագա ազատագրված Հայաստանի իշխանության բարձրագույն մարմինը:
զ) Արևմտահայերի 1-ին համագումարի կողմից ստեղծված մարմին:

1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-ե
2) 1-գ, 2-ա , 3-բ, 4-զ, 5-ե
3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-ե, 5-զ
4) 1-գ, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ա

**72** **Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

ա) Ք. ա. 612 թ. դաշնակիցները միահամուռ ջանքերով գրավեցին և հրի մատնեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն:
բ) «Ազատների» դասին պատկանողները նույնպես հարկեր էին վճարում:
գ) Անահիտը համարվել է Հայոց աշխարհի հովանավոր աստվածուհին:
դ) Արտաշատի պայմանագրի կնքումից հետո, երբ պարթևները ներխուժեցին Կիլիկիա, հռոմեական զորքերը դուրս մղեցին նրանց և այն վերադարձրեցին Հայաստանին:
ե) Երբ Մարկոս Կրասսոսը ժամանեց Ասորիք, Արտավազդ 2-րդը եկավ նրա մոտ և առաջարկեց պարթևների դեմ արշավանքը սկսել Հայաստանի հյուսիսային լեռնոտ շրջաններից:
զ) Տիգրան 3-րդը Հռոմի ցանկությամբ հայոց գահը կտակեց իր որդի Տիգրան 4-րդին:
է) Հռոմեական զորավար Կորբուլոնը, գրավելով Արտաշատ մայրաքաղաքը, հրամայեց ավերել այն:

1) ա, ե, զ
2) 2) գ, դ, է
3) ա, գ, է
4) բ, դ, ե





Քրիստոնեության սկզբնավորումը և տարածումը Հռոմեական կայսրությունում ու Մերձավոր Արևելքում: Քրիստոնեության մուտքը Հայաստան 1-ին դարում: Տրդատ 3-րդ և Գրիգոր Լուսավորիչ: Հայաստանը առաջին քրիստոնյա պետություն: Եկեղեցին խոշոր հողատեր: Հայոց եկեղեցու դերը:

**Պայքար անկախության պահպանման համար**

Խոսրով 3-րդ Կոտակ: Պայքար ընբոստ նախարարների դեմ: Խոսրով 3-րդի շինարարական գործունեությունը: Մազքութների արշավանքը: Պայքար Սասանյան Պարսկաստանի դեմ:

Տիրան թագավոր: Բախումները եկեղեցու և ընբոստ նախարարների հետ: Պարսկա-հռոմեական պատերազմը և Հայաստանը:

Արշակ 2-րդ: Ներսես Մեծը Հայոց կաթողիկոս: Աշտիշատի ժողովը: Արշակավանի կառուցումը: Երկրի ներքին խաղաղության խախտվելը 350-ական թվականների վերջին: Պարսկա-հռոմեական նոր պատերազմը և Հայաստանը: Տիգրանակերտի և Արշակավանի ավերվելը: Հայ-պարսկական պատերազմը և Արշակ 2-րդի մահը:

Պապի գահակալությունը: Պապի ներքին և արտաքին քաղաքականությունը: Հայոց եկեղեցու անկախացումը:

Հայաստանը Պապի հաջորդների օրոք: Հայոց պետության թուլացումը: Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև: Վռամշապուհ: Արշակունիների դինաստիայի վերացումը:

**Ազատագրական պայքարը 5-րդ դարում**

Հայաստանի ներքին ինքնավարությունը Արշակունիների թագավորության վերացումից հետո: Պարսկական լծի սաստկացումը: Դենշապուհի գործունեությունը Հայաստանում:

*Ապստամբության սկիզբը:* Կրոնափոխության հրովարտակը: Արտաշատի ժողովը: Հայ նախարարների կանչվելը Պարսկաստան: Անգղի և Զարեհավանի դեպքերը: Վարդան Մամիկոնյան:

*Շարժման ծավալումը:* Դաշնակիցների որոնումը: Օգնություն Աղվանքին: Խաղխաղի ճակատամարտը: Վասակ Սյունու նոր դիրքորոշումը:

Պարսկական բանակի մուտքը Հայաստան: Ավարայրի ճակատամարտը: Ապստամբության արդյունքները:

Պարսից արքունիքի քաղաքականությունը Հայաստանում Վահանանց պատերազմի նախօրեին: Ապստամբության սկիզբը: Հայ-վրացական համագործակցությունը: Ակոռիի, Ներսեհապատի և Ճարմանայի ճակատամարտերը: Պայքարի հետագա ընթացքը:

Նվարսակի հաշտությունը: Վահան Մամիկոնյանը Հայաստանի մարզպան:

**Հայաստանը 6-7-րդ դարերում**

Վիճակն Արևմտյան Հայաստանում 6-րդ դարի սկզբին: Հուստինիանոս Ա-ի վերափոխությունները: Հակաբյուզանդական ելույթներն ու ապստամբությունները:

Արևելյան Հայաստանը 6-րդ դարի սկզբին: Պարսից արքունիքի քաղաքականությունը: 571-572 թթ. ապստամբությունը: Կրտսեր Վարդան Մամիկոնյան: Պարսկա-բյուզանդական պատերազմները և Հայաստանի 591 թ. բաժանումը:

Արաբական արշավանքները Հայաստան: Պայքար քաղաքական կողմնորոշման համար. Թեոդորոս Ռշտունի: Հայ-արաբական պայմանագիրը: Հայաստանի ինքնավարությունը:

**Վաղ միջնադարյան Հայաստանի մշակույթը**

Մեսրոպ Մաշտոցը և գրերի գյուտը: Գրերի գյուտի արդյունքները:

*Գիտությունը:* Վաղ միջնադարի հայ պատմիչները: Մովսես Խորենացին և նրա «Հայոց պատմությունը»: Փիլիսոփայություն: Դավիթ Անհաղթ: Բնական գիտությունների զարգացումը: Անանիա Շիրակացի:

*Արվեստը:* Ճարտարապետություն: Քանդակագործություն: Նկարչություն: Թատրոն և երաժշտություն:

**Պայքար արաբական տիրապետության դեմ**

Հայաստանի նվաճումը արաբների կողմից: Հայերի առաջին ընդվզումը արաբական տիրապետության դեմ (703թ.) և դրա հետևանքները: Արաբների քաղաքականությունը Հայաստանում: Հակաարաբական ելույթները 748-750 թթ.: 762 թ. ապստամբությունը Վասպուրականում: 774-775 թթ. մեծ ապստամբությունը և դրա հետևանքները:

Բագրատունի, Արծրունի, Սյունի և Արցախի իշխանական տների հզորացումը և Հայաստանի ներքին ինքնուրույնության վերականգնումը 9-րդ դարի առաջին կեսին: 850-855 թթ. ապստամբությունը. Խութեցի Հովնան: Արաբների պատժիչ արշավանքների ձախողումը և Հայաստանի ինքնավարության վերականգնումը:





**69** **Նշված պայմաններից ընտրել չորսը, որոնք առնչվում են 1920 թ. հոկտեմբերին մշակված հայ-ռուսական պայմանագրի նախագծի հետ.**

ա) Ռուսաստանը և Ադրբեջանը ճանաչելու էին Հայաստանի իրավունքները Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ:
բ) Ռուսաստանը և Ադրբեջանը ճանաչելու էին Հայաստանի իրավունքները Զանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:
գ) Հայաստանը համաձայնվում էր, որ մինչև հարցի վերջնական լուծումը Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարվեն վիճելի տարածքներ և ժամանակավորապես զբաղվեցվեն ռուսական զորքերի կողմից:
դ) Ռուսաստանը Հայաստանին տրամադրելու էր 2,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ:
ե) Թուրքիայի հետ վեճերը լուծելու հարցում Հայաստանն ընդունելու էր Ռուսաստանի բարեկամական օժանդակությունը, այն բանից հետո, երբ թուրքական զորքերը հետ քաշվեին մինչև 1914 թ. սահմանը:
զ) Հայաստանը Ռուսաստանին հնարավորություն էր տալու օգտվելու իր երկաթուղիներից՝ զորքեր և այլ ռազմական փոխադրումներ քեմալական Թուրքիա հասցնելու համար:
է) Նախիջևանի մարզը դրվելու էր Ադրբեջանի խնամակալության ներքո՝ երրորդ կողմին չհանձնելու պայմանով:

1) ա, գ, բ, է  2) ա, դ, ե, զ  3) բ, գ, ե, զ  4) ա, բ, գ, է

**70** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) աշխարհաժողով
2) ագարակ
3) դաստակերտ
4) իշխան կամ նախարար
5) հայրենիք

ա) նախարարներին ժառանգաբար պատկանող հողեր
բ) կարևորագույն պետական հարցերի լուծման համար հրավիրված պաշտոնյաների հատուկ հավաքներ
գ) համայնքի անդամների բոլոր կարևոր խնդիրները լուծող ժողով
դ) թագավորին, արքունիքի անդամներին, տաճարներին պատկանող խոշոր մասնավոր տնտեսություններ
ե) խոշոր ավատատերերին տրվող անվանումը
զ) ծառայության դիմաց զինվորներին ու ծառայողներին տրվող մասնավոր տնտեսություններ

1) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-ա  3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-բ
2) 1-գ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-դ  4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-գ

**67** Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Իրադարձությունը | Տարեթիվը | Գործիչը |
|---|---|---|---|
| 1. | Հայրենական մեծ պատերազմը | 1988 թ. հուլիսի 18 | Ալեքսանդր Մյասնիկյան |
| 2. | Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը | 1942 թ. հուլիսի 21 | Սերգեյ Համբարձումյան |
| 3. | ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը | 1920 թ. դեկտեմբերի 2-3 | Լազր Չափչախյան |
| 4. | ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը | 1921 թ. հուլիսի 4 | Ալեքսանդր Խատիսյան |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 4 | 3 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 1 | 2 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 1 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 1 |
| 2 | 4 | 4 |
| 3 | 2 | 3 |
| 4 | 1 | 2 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 3 | 1 |
| 4 | 4 | 2 |

**68** **Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել 1829 թ. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրում.**

ա) Սև ծովի արևելյան ափերը՝ Փոթի նավահանգստով, և Ախալցխան ու Ախալքալաքն անցնում են Ռուսաստանին:
բ) Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել 310 մլն ռուբլու ռազմատուգանք:
գ) Ներում է շնորհվում պատերազմին մասնակցած երկու կողմերի հպատակներին ու ռազմագերիներին:
դ) Ռուսաստանը պարտավորվում է զորքերը դուրս բերել գրաված շրջաններից 6 ամսվա ընթացքում:
ե) Թուրքիան պարտավորվում է հայաբնակ մարզերում բարենորոգումներ կատարել:
զ) Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերին թույլատրվում է գաղթել ռուսական պետության սահմանները:
է) Ռուսաստանին անցած Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններից կազմվելու է Կարսի մարզը:

1) ա, բ, ե　　3) ա, գ, զ
2) բ, զ, է　　4) գ, ե, զ





## ԲԱԺԻՆ Բ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

### Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը

Հայկական պետականության վերականգնման նախադրյալները: Աշոտ Բագրատունին: Հայաստանի փաստական անկախության վերականգնումը: Հայաստանի անկախության ճանաչումը: Աշոտ 1-ին Բագրատունին հայոց թագավոր:

Պայքար միասնական հայկական պետություն ստեղծելու համար: Սմբատ 1-ին: Արաբների ժամանակավոր հաջողությունը: Աշոտ 2-րդ Երկաթի պայքարն արաբների դեմ: Հայ-բյուզանդական հակաարաբական դաշինքը: Աշոտ 2-րդը Հայաստանի շահնշահ (թագավորների թագավոր): Հայկական պետության ամրապնդումը:

### Բագրատունյաց Հայաստանի վերելքը

Հայկական թագավորության վերելքը Աբասի և Աշոտ 3-րդի օրոք: Անին մայրաքաղաք: Սմբատ 2-րդ: Բագրատունյաց թագավորության հզորացումը Գագիկ 1-ինի օրոք: Երկրի հետագա բարգավաճումը:

Պետական կարգը. կառավարման համակարգը և դասային հարաբերությունները:

### Տնտեսական կյանքի զարգացումը 9-11-րդ դարերում

Երկրագործության զարգացումը: Անասնապահությունը: Արհեստագործության զարգացմանը նպաստող պայմանները: Հիմնական արհեստները: Ներքին առևտուրը: Մասնակցությունը միջազգային առևտրին: Միջնադարյան քաղաքը:

### Բագրատունյաց թագավորության մասնատումն ու անկումը

Կենտրոնացված պետություն ստեղծելու Բագրատունիների ջանքերի ձախողման պատճառները: Վասպուրականի, Վանանդի (Կարսի), Սյունիքի և Տաշիր-Ձորագետի (Լոռու) թագավորությունները: Տայքի կյուրոպաղատությունը:

Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության ակտիվացումը: Տարոնի, Տայքի և Վասպուրականի զավթումը կայսրության կողմից: Բագրատունյաց թագավորության թուլացումը: Պայքար պետականության պահպանման համար: Վահրամ Պահլավունի և Գագիկ 2-րդ: Անիի թագավորության անկումը:

### Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները 5-11-րդ դարերում

*Հայոց եկեղեցին 5-11-րդ դարերում*: Եկեղեցական կազմակերպությունը: Փոխհարաբերություններն այլ քրիստոնեական

եկեղեցիների հետ. Դվինի 506 և 554 թվականների եկեղեցական ժողովները: Կաթողիկոսական աթոռի տեղափոխությունները:

*Պավլիկյան շարժումը*: Շարժման առաջացումը: Հովհան Օձնեցին և Դվինի 719 թ. եկեղեցական ժողովը: Պավլիկյանների գաղափարները: Պավլիկյանների նշանավոր առաջնորդները. Կոստանդին, Սերգիոս, Կարբեաս: Շարժման պարտությունը:

**Հայ-վրացական զինակցությունը սելջուկ-թուրքերի դեմ պայքարում: Զաքարյանների իշխանությունը**

Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանում: Սելջուկ-թուրքերի առաջին արշավանքները: Թաթուլ Վանանդեցի: Մանազկերտի ճակատամարտը և Հայաստանի նվաճումը: Սելջուկ-թուրքերի արշավանքների հետևանքները:

Կարսի, Սյունիքի և Տաշիր-Ձորագետի թագավորությունները, Սասունի Թոռնիկյանների և Արցախի իշխանությունները 11-12-րդ դարերում:

Հայ-վրացական զինակցության սկզբնավորումը և պայքարը Անիի համար: Ազատագրական պատերազմները Հայաստանում. հյուսիսարևելյան Հայաստանի ազատագրումը: Զաքարյանների ինքնավար իշխանությունը: Հայկական իշխանական նոր տների առաջացումը: Տնտեսական կյանքի վերելքը Զաքարյանների օրոք:

**Կիլիկիայի հայկական պետությունը**

Կիլիկիայի բնաշխարհը: Հայերը Կիլիկիայում: Հայկական իշխանությունների առաջացումը: Ռուբինյանների իշխանության ստեղծումը և ընդարձակումը: Թորոս 1-ին և Լևոն 1-ին: Թորոս 2-րդը և Ռուբինյան իշխանության վերականգնումն ու ամրապնդումը: Մլեհի ներքին և արտաքին քաղաքականությունը: Սիսը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:

Լևոն 2-րդը և Կիլիկյան Հայաստանի հզորացումը: Թագավորության հռչակումը: Լևոն 2-րդի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Հեթումյանների դինաստիայի հաստատումը: Հեթում 1-ին: Մոնղոլները և Կիլիկյան Հայաստանը: Հայ-մոնղոլական պայմանագիրը: Պայքար Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ 13-րդ դարում: Լևոն 3-րդ:

Քաղաքական շրջադարձ դեպի Արևմուտք: Ունիթորական և հակաունիթորական շարժումները: Կիլիկյան Հայաստանի թուլացումը: Թագավորության վերացումը:

Պետական կարգը. արքունիքը, բանակը:





**63** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**
«Եվ այսպես, հրավիրված լինելով գահին բազմելու, նա 17 տարվա ընթացքում կառավարում էր երկիրը հանգստությամբ»:

*Ո՞ր երկիրն է հիշատակված այս աղբյուրում:*

1) Ասորիքի 2) Կոմմագենեի 3) Կորդուքի 4) Պոնտոսի

**64** **Ո՞ր բերդի գրավմանն են նվիրված Խ. Աբովյանի հետևյալ տողերը. «Հինգ օր, հինգ գիշեր սար ու ձոր դմբում, դմբմբում էր: Էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»:**

1) Կարսի բերդի
2) Երևանի բերդի
3) Շուշիի բերդի
4) Բայազետի բերդի

**65** **Համապատասխանեցնել տեղանունները.**

| | |
|---|---|
| 1) Ուրմե | ա) Ծոփք |
| 2) Դիաուխի | բ) Մալաթիա |
| 3) Վելիքուխի | գ) Տարոն |
| 4) Մելիդ | դ) Հարք |
| 5) Արխի | ե) Տայք |
| 6) Ծուփա | զ) Գեղարքունիք |
| | է) Շիրակ |

1) 1-դ, 2-գ, 3-է, 4-ե, 5-ա, 6-բ
2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-զ, 5-դ, 6-է
3) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-դ, 6-ա
4) 1-գ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ, 6-ա

**66** **Հայ արքաների անունները համապատասխանեցնել դինաստիայի հետ.**

| | |
|---|---|
| 1) Գագիկ 1-ին | ա) Ռուբինյան |
| 2) Լևոն 2-րդ | բ) Արծրունի |
| 3) Սենեքերիմ | գ) Արտաշեսյան |
| 4) Արշակ 2-րդ | դ) Արշակունի |
| 5) Արշամ | ե) Բագրատունի |
| | զ) Երվանդունի |

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-ե
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ, 5-զ
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-գ, 5-ա
4) 1-ե, 2-բ, 3-դ, 4-բ, 5-դ

**59** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Սիսի հռչակվելը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:
բ) Կարսի Գագիկ Աբբասյան թագավորի հեռանալը Փոքր Ասիա:
գ) Վրաց Դավիթ 7-րդ թագավորի գլխավորած հակամոնղոլական ապստամբությունը Հայաստանում և Վրաստանում:
դ) Սելջուկ-թուրքերի առաջին արշավանքը Հայաստան:
ե) Թորոս 1-ինի կողմից Սիս և Անարզաբա քաղաքների գրավումը:
զ) Դավիթ Շինարարի կողմից Անին գրավելը:

1) բ, դ, ե, ա, զ, գ
2) դ, ե, զ, բ, գ, ա
3) դ, բ, ե, զ, ա, գ
4) ե, ա, դ, գ, զ, բ

**60** **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը.**

ա) Դավիթ Բեկի հաղթական մարտը ջևանշիր ցեղերի դեմ:
բ) Հալիձորի ճակատամարտը:
գ) Հովսեփ Էմինի վերադարձը Հնդկաստան:
դ) Մադրասի տպարանի հիմնումը:
ե) Մովսես Սարաֆյանի ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային:
զ) «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գրքի լույս ընծայումը:

1) գ 2) դ 3) ե 4) բ

**61** **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը.**

ա) Հակոբ Վարդովյանի թատերախմբի ստեղծումը Կ.Պոլսում:
բ) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը:
գ) Բարենորոգումների «Մայիսյան» ծրագրի հաստատվելը սուլթանի կողմից:
դ) «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծումը:
ե) Ազիզ փաշայի արշավանքը Զեյթուն:
զ) Երիտթուրքական հեղաշրջումը Թուրքիայում:

1) գ, դ 2) դ, ե 3) բ, դ 4) բ, ե

**62** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**
«Եվ այսպես, հրավիրված լինելով գահին բազմելու, նա 17 տարվա ընթացքում կառավարում էր երկիրը հանգստությամբ»:

*Հայ արքաներից ո՞ւմ մասին է խոսքը.*

1) Երվանդ Սակավակյացի
2) Տիգրան 2-րդի
3) Գագիկ 2-րդի
4) Լևոն 2-րդի



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**Հայաստանը մոնղոլական արշավանքների և տիրապետության ժամանակաշրջանում**

Հայաստանն ազատագրելու Զաքարյանների ջանքերի անավարտ մնալու պատճառները: Մոնղոլական զորքերի առաջին արշավանքը: Մոնղոլների գլխավոր արշավանքը և Հայաստանի հյուսիսարևելյան գավառների նվաճումը: Արևմտյան և Հարավային Հայաստանի նվաճումը: Պայքար մոնղոլական լծի դեմ:

**Հայկական մշակույթը 10-14-րդ դարերում**

Հայկական մշակույթի զարգացման նախադրյալները:
Դպրոց: Միջնադարյան Հայաստանի համալսարանները:
*Գիտություն*: Պատմագրություն: Փիլիսոփայություն: Իրավագիտություն. Մխիթար Գոշ: Բնական գիտություններ. Մխիթար Հերացի:
*Գրականություն*: Ժողովրդական բանահյուսություն: «Սասնա ծռեր»: Գեղարվեստական գրականություն. Գրիգոր Նարեկացի: Առակագրություն:
*Նյութական մշակույթ և արվեստ*: Ճարտարապետություն. Մանուել և Տրդատ: Խաչքարեր. Մոմիկ: Մանրանկարչություն. Թորոս Ռոսլին: Երաժշտություն:

## ԲԱԺԻՆ Գ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

**Հայաստանը 15-17-րդ դարերում**

Հայաստանի տնտեսական ու քաղաքական դրությունը 15-րդ դարի առաջին կեսին: Երևանը Արևելյան Հայաստանի կենտրոն:
Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում: Հայոց եկեղեցու թեմերն ու աթոռները:
Հայոց պետականության վերականգնման փորձերը 15-րդ դարի երկրորդ կեսին:
Օսմանյան և Սեֆյան պետությունների կազմավորումը և հզորացումը: Հայաստանը թուրք-պարսկական բախումների թատերաբեմ: 1555 թ. հաշտությունը և Հայաստանի բաժանումը: Թուրք-պարսկական պատերազմի վերսկսումը: Հայաստանի նվաճումը թուրքերի կողմից: Շահ Աբասի արշավանքները: Հայ բնակչության բռնագաղթը: Պատերազմների հետագա ընթացքը և Հայաստանի նոր բաժանումը:
Արևելյան Հայաստանը Պարսկաստանի կազմում: Վարչական բաժանումներն Արևմտյան Հայաստանում: Հայկական իշխանությունները:

*Հայաստանի ազատագրության խնդիրը 16-17-րդ դարերում*: Էջմիածնի և Սեբաստիայի գաղտնի ժողովները: Ազատագրական միտքը 17-րդ դարում:

**Հայկական գաղթավայրերը միջնադարում**

*Եվրոպայի հայկական գաղութները*. Ղրիմ, Ուկրաինա և Լեհաստան:

*Ասիայի հայկական գաղութները*. Կոստանդնուպոլիս, Նոր Ջուղա:

**Հայկական մշակույթը 15-17-րդ դարերում**

Դպրոց:

Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ:

Արվեստ. մանրանկարչություն, կիրառական արվեստ, խաչքարային արվեստ:

Գիտություն. բնական գիտություններ, պատմագիտություն:

## ՆՈՐ ՇՐՋԱՆ

## ԲԱԺԻՆ Ա. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԿԵՍԸ

**Հայաստանը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 18-րդ դարի առաջին կեսը: Ազատագրական շարժումը Արցախում և Սյունիքում**

Ազատագրական շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը: Էջմիածնի 1677 թ. գաղտնի ժողովը: Հակոբ Ջուղայեցի: Իսրայել Օրին Եվրոպայում: Անգեղակոթի ժողովը: Հայաստանի ազատագրման «Պֆալցյան ծրագիրը»: Օրու շրջադարձը Ռուսաստան: Հայաստանի ազատագրման «Մոսկովյան ծրագիրը»: Իսրայել Օրու դեսպանությունը: Օրու դերը հայ ազատագրական շարժման մեջ:

Քաղաքական դրությունը Պարսկաստանում և Անդրկովկասում 18-րդ դարի առաջին տասնամյակներին: Պետրոս 1-ինի կասպիական արշավանքը: Հայ-վրացական համագործակցությունը: Թուրքերի ներխուժումն Անդրկովկաս: Երևանի պաշտպանությունը:

Ազատագրական պայքարի անբարենպաստ պայմանները Սյունիքում: Դավիթ Բեկ: Սյունիքի ազատագրումը: Սյունիքի ինքնավար իշխանության ճանաչումը պարսից շահի կողմից: Պայքարը թուրքական բանակների դեմ: Հալիձորի և Մեղրիի ճակատամարտերը: Ազատագրական պայքարի հետագա ընթացքը: Մխիթար սպարապետ:





**56** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բնութագրում Զեյթունի 1862 թ. ինքնապաշտպանության նշանակությունը.**

ա) Ինքնապաշտպանությունը բարձրացրեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը:
բ) Ինքնապաշտպանությունը խթանեց հայ ազատագրական շարժումները:
գ) Զեյթունի օրինակով ազատագրական պայքարի ելան օսմանյան լծի տակ տառապող բալկանյան ժողովուրդները:
դ) Զեյթունի ինքնապաշտպանությունը խթանեց հայ հասարակական և քաղաքական մտքի զարգացումը:
ե) Զեյթունում նշանակվեց քրիստոնյա (ազգությամբ հույն) կառավարիչ:
զ) Զեյթունում ստեղծվեցին եվրոպական տերությունների հյուպատոսություններ:

1) բ, դ, զ 2) բ, ե, զ 3) ա, բ, դ 4) գ, դ, ե

**57** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնց պատճառով ռուսական իշխանությունները հրաժարվեցին բացահայտ հակահայկական դիրքորոշումից և վերադարձրին բռնագրավված եկեղեցական գույքը.**

ա) Օրենքի հանդեպ ռուսական կառավարող շրջաններում տիրող մեծ դժգոհությունը:
բ) Միջազգային հասարակայնության զանգվածային բողոքը:
գ) 1904 թ. սկսված ռուս-ճապոնական պատերազմը:
դ) Ռուսաստանում սկսված հեղափոխական շարժումները:
ե) Հայ ժողովրդի միահամուռ դիմադրությունը:
զ) Ցարի առջև Կովկասի կառավարչապետ Գոլիցինի միջնորդությունը:

1) ա, գ, զ 2) բ, դ, ե 3) ա, բ, զ 4) գ, դ, ե

**58** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Տիզբոնից հայ նախարարների վերադարձը Հայաստան, Անգղի և Զարեհավանի դեպքերը:
բ) Ներսեհապատի ճակատամարտը:
գ) Արաբների երկրորդ արշավանքը Հայաստան:
դ) Հռիփսիմեի տաճարի կառուցումը:
ե) Հայաստանի երկրորդ բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
զ) Հայ-արաբական պայմանագրի կնքումը:

1) ա, բ, ե, դ, գ, զ
2) բ, ա, ե, գ, զ, դ
3) ա, բ, գ, ե, զ, դ
4) ա, բ, դ, գ, ե, զ

**54** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) պանթուրքիզմ
2) պանիսլամիզմ
3) «Ազգային ուխտ»
4) օսմանիզմ

ա) Քաղաքականություն, որի նպատակն էր Թուրքիայի շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրներն ու տարածքները:
բ) Երիտթուրքերի կողմից սկզբնապես կիրառված քաղաքականություն, որի նպատակը կայսրության ոչ թուրք ժողովուրդների թուրքացումն էր:
գ) Փաստաթուղթ, որում ամրագրվում էր Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ազգային ու կրոնական փոքրամասնությունների լիակատար հավասարությունը:
դ) Քաղաքականություն, որի նպատակն էր Թուրքիայի շուրջը համախմբել թուրքալեզու ժողովուրդներին և ստեղծել «Մեծ Թուրան» պետությունը:
ե) Քաղաքական ծրագիր, որում թուրքաբնակ բոլոր տարածքները համարվում էին Թուրքիա:

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ
2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

**55** **Հայաստանի համար ի՞նչ հետևանքներ ունեցավ Արտաշատի պայմանագրի կնքումը.**

ա) Հայաստանը պահպանեց սեփական տարածքն ու մնաց ամբողջական:
բ) Հայաստանը ստացավ նոր հողեր:
գ) Հայաստանը կորցրեց անկախությունը:
դ) Հայաստանը Հռոմին զիջեց իր արևմտյան նահանգները:
ե) Հայաստանը կորցրեց մինչ այդ նվաճած տարածքները:
զ) Ձախողվեց հայոց գահը զավթելու Տիգրան Կրտսերի ծրագիրը:

1) ա, բ, զ 2) բ, ե, զ 3) ա, ե, զ 4) գ, դ, ե





Հայկական զորքի կազմակերպումն Արցախում: Եսայի Հասան-Ջալալյան և Ավան հարյուրապետ: Պայքար թուրք նվաճողների դեմ:

Հայաստանի քաղաքական ու տնտեսական դրությունը 18-րդ դարի 30-50-ական թթ.: Հայկական մելիքությունները:

**Հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի երկրորդ կեսին**

Հնդկաստանի հայ գաղութը 16-17-րդ դարերում: Հովսեփ Էմինի գործունեության սկիզբը: Հովսեփ Էմինը Ռուսաստանում և Վրաստանում: Հովսեփ Էմինը Արցախում: Նրա ծրագրերի ձախողումը:

Ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորումը Հնդկաստանում: Շահամիր Շահամիրյան: «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերը: Շահամիրյանի խմբակի գործունեությունը:

Հայաստանի ազատագրության Մովսես Սարաֆյանի ծրագիրը: Հայ-ռուսական դաշնագրի երկու նախագիծ:

**Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին**

Հայաստանը Օսմանյան կայսրության և Պարսկաստանի վարչական բաժանումներում 19-րդ դարի սկզբին: Հայ ժողովրդի ծանր դրությունը: Ռազմաքաղաքական իրադրությունն Անդրկովկասում. Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը. ռուսական բանակի Երևանյան 1-ին և 2-րդ արշավանքները: Գյուլիստանի պայմանագիրը: 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Բուխարեստի հաշտությունը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի սկիզբը, Շուշիի պաշտպանությունը: Դիմադրական կռիվները Հայաստանի մյուս շրջաններում: Շամխորի ճակատամարտը: Հայ կամավորական ջոկատների կազմակերպումը: Ներսես Աշտարակեցի: Կամավորների և դեկաբրիստների մասնակցությունը պատերազմին: Երևանի գրավումը: Թուրքմենչայի պայմանագիրը: Պարսկահայերի գաղթը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նշանակությունը:

1828-1929 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատը: Հայերի մասնակցությունը պատերազմին: Բայազետի հերոսական պաշտպանությունը: Ադրիանապոլսի պայմանագիրը: Արևմտահայերի գաղթը:

**Հայաստանը 1830-1860-ական թվականներին**

*Արևելյան Հայաստանը ռուսական կայսրության կազմում*: Երևանի ժամանակավոր վարչությունը: Հայաստանի ինքնավա-

րության նախագիծը: Հայկական մարզը: Վարչական փոփոխությունները Անդրկովկասում 1840-ական թվականներին: Կովկասի փոխարքայության ստեղծումը: Երևանի նահանգը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը: Ցարիզմի գաղութային քաղաքականությունը: 1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքը: 19-րդ դարի առաջին կեսի գյուղացիական հուզումները:

*Արևմտահայության դրությունը*: Իրավիճակն Արևմտյան Հայաստանում Ադրիանապոլսի պայմանագրից հետո: 1839 թ. թանզիմաթը: Արևմտահայության ծանր վիճակը: Գյուղատնտեսությունը: Արհեստներն ու առևտուրը:

*Ղրիմի պատերազմը և հայերը*: Կովկասյան ճակատը: Կարսի գրավումը: Հայերի վերաբերմունքը պատերազմի նկատմամբ: Փարիզի հաշտության պայմանագիրը:

Արևմտահայ սահմանադրական շարժումը: 1863 թ. ազգային սահմանադրությունը և դրա նշանակությունը:

*Զեյթունի 1862 թ. հերոսամարտը*: Զեյթունի կիսաանկախ վիճակը: Թուրքական բանակի արշավանքը Զեյթուն: Զեյթունցիների հաղթանակը: Զեյթունի հերոսամարտի նշանակությունը:

### Հայկական մշակույթը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին

Դպրոցը: Մամուլը, տպագրությունը:

*Գիտությունը*: Մխիթարյան միաբանության հիմնումը: Պատմագրությունը: Լեզվաբանությունը. «Նոր բառգիրք հայկազյան լեզվի»: Բնական գիտությունները:

*Արվեստը*: Նկարչությունը: Երաժշտությունը: Թատրոնը:

## ԲԱԺԻՆ Բ. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

### 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը

*Պատերազմը և հայերը*: Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը Մերձավոր Արևելքում և Բալկաններում: Ռազմական գործողությունները Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում. Բայազետի պաշտպանությունը, Կարսի և Էրզրումի գրավումը: Հայերի մասնակցությունը պատերազմին: Ռուսական բանակի հայազգի զորավարները:

*Հայկական հարցի առաջացումը*: Սան Ստեֆանոյի պայմանագիրը. պայմանագրի 16-րդ և 25-րդ հոդվածները: Եվրոպական տերությունների և Ռուսաստանի հակասությունները: Հայ-





Բ մակարդակ

**51** **Բերված կետերից ո՞րն է առնչվում 1699 թ. Սյունիքի Անգեղակոթ գյուղում հրավիրված գաղտնի խորհրդակցության որոշումների հետ.**

1) Լիազորել Իսրայել Օրուն շարունակելու բանակցությունները ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ ռուսական իշխանությունների հետ:
2) Իսրայել Օրուն ուղեկցող կարգել Եսայի Հասան Ջալալյանին:
3) Ֆրանսիայի արքունիքին խնդրել արագացնել Հայաստան զորք ուղարկելը:
4) Ռազմական օգնության դիմաց Ֆլորենցիայի դուքսին ճանաչել հայոց թագավոր:

**52** **Ո՞րն է ճիշտ պատասխանը:**
«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը տնտեսական միջոցառումների համակարգ էր, որը...

1) բացառում էր քաղաքի և գյուղի միջև ապրանքափոխանակությունը:
2) նպաստում էր ազատ առևտրի զարգացմանը:
3) նպաստում էր արդյունաբերության զարգացմանը:
4) խթանում էր գյուղատնտեսության զարգացումը:

**53** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) ստրատեգոս
2) հազարապետություն
3) բդեշխություն
4) մաղխազություն

ա) թագավորի և արքունիքի անվտանգությունը պահպանող գործակալության անվանումը
բ) պետության սահմաններում գտնվող մեծ նահանգները
գ) Հին Հայաստանի գավառների կառավարիչների սկզբնական անվանումը
դ) Հին Հայաստանում ամենամեծ գործակալությունը
ե) խոշոր ավատատերերի տիրույթները

| | |
|---|---|
| 1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա | 3) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ |
| 2) 1-ե, 2-բ, 3-դ, 4-գ | 4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե |

**49** Պատմական գործիչի անունը համապատասխանեցնել մականվան հետ.

| | |
|---|---|
| ա) Դավիթ | 1) Երկաթ |
| բ) Աշոտ 2-րդ | 2) Մսակեր |
| գ) Աշոտ 3-րդ | 3) Անհողին |
| դ) Աշոտ Բագրատունի | 4) Ողորմած |
| ե) Թորոս 2-րդ | |

1) ա-4, բ-1, գ-3, դ-2
2) ա-4, գ-1, դ-2, ե-3
3) ա-3, բ-1, գ-4, դ-2
4) բ-1, գ-4, դ-2, ե-3

**50** Սփյուռքից տարբեր տարիների Խորհրդային Հայաստան ներգաղթած հայերի թվաքանակը համապատասխանեցնել տարեթվերի հետ.

1) 1925-1926 թթ. ներգաղթածներ
2) 1946 թ. ներգաղթածներ
3) 1948 թ. ներգաղթածներ
4) 1960-1970-ական թվականների ներգաղթածներ

ա) 32 000
բ) 6 000
գ) 20 000
դ) 51 000
ե) 10 000

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե
2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
4) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ





կական պատվիրակության գործունեությունը: Բեռլինի կոնգրեսը: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը: Հայկական հարցը:

**Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Ազգային կուսակցությունների ձևավորումը**

*Գաղտնի խմբակներն ու կազմակերպությունները:* Ազատագրական խմբակների և կազմակերպությունների հանդես գալու նախադրյալները: Արևելահայ խմբակներն ու կազմակերպությունները: Արևմտահայ խմբակներն ու կազմակերպությունները:

*Կուսակցությունների առաջացումը:* Արմենականների կուսակցությունը: Հնչակյան կուսակցությունը: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: Կուսակցությունների դերն ու նշանակությունը:

**Արևմտյան Հայաստանը 1880-1890-ական թվականներին: Ազգային-ազատագրական շարժման զինված պայքարի փուլը**

Արևմտահայերի ազգային և տնտեսական հալածանքները:

*Հայդուկային շարժումները*: Շարժման սկզբնավորումը: Կուսակցությունները և հայդուկային շարժումը: Նշանավոր հայդուկապետերը. Արաբո, Աղբյուր Սերոբ, Հրայր: Հայդուկային շարժման նշանակությունը:

*Արևմտահայերի կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը 1890-ական թվականներին*: Արևմտահայերի 1895-1896 թթ. կոտորածները: Ինքնապաշտպանական մարտերը: Կոտորածների հետևանքները: Մեծ տերությունների դիրքորոշումը: Հայկական կոտորածները և առաջադեմ հասարակայնությունը:

*Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը*: Գում Գափուի ցույցը: Սարգիս Կուկունյանի արշավանքը: Սասունի 1894 թ. ապստամբությունը: Բարենորոգումների Մայիսյան ծրագիրը: Բաբ Ալիի 1895 թ. ցույցը: Զեյթունի 1895 թ. ապստամբությունը:

**Արևելյան Հայաստանը 20-րդ դարի սկզբին**

*Ցարիզմի գաղութային քաղաքականությունը և արևելահայության ըմբոստացումը*: Ցարիզմի ազգային-գաղութային ճնշման ուժեղացումը: 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Հայերի զանգվածային հակացարական ելույթները: Հայ ազգային-քաղաքական ուժերի դիրքորոշումն օրենքի հանդեպ: Հունիսի 12-ի օրենքի վերացումը և եկեղեցական գույքի վերադարձը:

*Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները*: Ազգային և կրոնական թշնամանք բորբոքելու ցարական իշխանությունների քաղաքականությունը: Հայ-թաթարական ընդհարումները 1905-

1906 թթ.: Դաշնակցությունը հայերի ինքնապաշտպանության կազմակերպիչ:Իշխանությունների հայատյաց ներկայացուցիչների պատժումը:

**Արևմտյան Հայաստանը 20-րդ դարի սկզբին**

*Թուրքական կառավարության բռնատիրական քաղաքականությունը*: Առաքելոց վանքի կռիվը: Սասունը ծնկի բերելու օսմանյան իշխանությունների ծրագիրը: Դաշնակցական և հնչակյան հայդուկային ու զինատար խմբերի անցումն Արևմտյան Հայաստան 1902-1904 թթ.: Անդրանիկը Սասունի զինվորական խորհրդի ղեկավար: Դիմադրական մարտերը 1904 թ. ապրիլ-հուլիս ամիսներին: Հայդուկային խմբերի հեռանալն Արևմտյան Հայաստանից: Գևորգ Չավուշ:

*Երիտթուրքերի հեղաշրջումը և արևմտահայությունը*: Հակասուլթանական շարժումներն Օսմանյան կայսրությունում 20-րդ դարի սկզբին: Երիտթուրքական հեղաշրջումը և կայսրության ժողովուրդները: Օսմանիզմի քաղաքականությունը: Պանիսլամիզմի և պանթուրքիզմի ծրագրերը: Աբդուլ Համիդի գահազրկումը: Ադանայի կոտորածը:

*Հայկական հարցը 1912-1914 թթ.*: Հայկական բարենորոգումները և մեծ տերությունները: Հայկական բարենորոգումների խնդիրը և Ռուսաստանը: 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը:

**Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայոց Մեծ եղեռնը**

*Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում և հայերը*: Պատերազմող խմբավորումների նպատակները: Ռազմական գործողությունների սկիզբը Կովկասյան ճակատում: Սարիղամիշի ճակատամարտը: Պատերազմական գործողությունները 1915-1916 թթ.: Կամավորական շարժումը:

*Արևմտահայերի զանգվածային տեղահանությունը և ջարդերը*: Արևմտահայերի բնաջնջման երիտթուրքական ծրագիրը, դրա նպատակները: Հայ զինվորների զինաթափումն ու ոչնչացումը: Հայ մտավորականության և կազմակերպող ուժի ձերբակալությունն ու ոչնչացումը: Արևմտահայերի զանգվածային տեղահանությունն ու կոտորածը: Հայ գաղթականությունը: Մեծ եղեռնի հետևանքները:

*Հայերի ինքնապաշտպանական մարտերը*. Վան-Վասպուրական, Սասուն, Շապին-Գարահիսար, Սուետիա, Ուրֆա:

Հայոց ցեղասպանությունը և առաջադեմ հասարակայնությունը:





**45** **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Մանազկերտի
բ) Վարդանակերտի
գ) Դողսի
դ) Արծնիի
ե) Սևանի

1) բ, գ, դ, ա, ե
2) ա, դ, ե, գ, բ
3) բ, դ, գ, ե, ա
4) դ, ե, ա, բ, գ

**46** **19-րդ դարի առաջին կեսին Անդրկովկասում ցարիզմի կատարած վարչական փոփոխությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Երևանի նահանգի ստեղծումը:
բ) Հայկական մարզի ստեղծումը:
գ) Կովկասի փոխարքայության ստեղծումը:
դ) Վրացա-Իմերեթական նահանգի ստեղծումը:
ե) Անդրկովկասի բաժանումը չորս նահանգների:

1) բ, դ, գ, ե, ա
2) դ, ե, ա, գ, բ
3) գ, բ, դ, ա, ե
4) ա, դ, ե, բ, գ

**47** **Պատմական ո՞ր հուշարձանի կառուցման մասին է Տրդատ 1-ինի թողած հունարեն հետևյալ արձանագրությունը.**

«Հելիոս Տիրիդատես թագավոր Մեծ Հայքի, թագավորելով իբրև դեսպոտ, կառուցեց պայծառափայլ թագուհու համար 11-րդ տարում իր թագավորության»:

1) Անահիտի տաճարի
2) Մուծածիրի տաճարի
3) Գառնիի ամրոցի
4) Գեղարդի

**Ա48** **Ո՞ր իրադարձության ժամանակ է հրապարակվել հետևյալ հայտարարությունը.** «Բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է: Մինչև կառավարության կազմվելը ամբողջ իշխանությունը գտնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքում»:

1) Հայաստանի խորհրդայնացման
2) 1920 թ. թուրք-հայկական պատերազմի
3) 1921 թ. փետրվարյան ապստամբության
4) Համազանգեզուրյան 2-րդ համագումարի

**42** **Ըստ Սևրի պայմանագրի՝ որտեղո՞վ էր անցնելու Հայաստանի և Թուրքիայի սահմանը.**

1) Բիթլիսի, Խարբերդի, Տրապիզոնի նահանգներով:
2) Սեբաստիայի, Տրապիզոնի, Էրզրումի նահանգներով:
3) Էրզրումի, Վանի, Տրապիզոնի, Բիթլիսի նահանգներով:
4) Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի, Բիթլիսի նահանգներով:

**43** **Հին Հայաստանում ինչո՞ւ էր պետությունը շահագրգռված գյուղական համայնքի պահպանմամբ: Որովհետև ...**

1) համայնքի հիմնական աշխատուժը ստրուկներն էին:
2) համայնքը հարկ և զորք էր տալիս պետությանը:
3) համայնքը կազմված էր թագավորին հավատարիմ ազնվականներից:
4) դրանով թագավորը թույլ չէր տալիս շահագործել գյուղացիներին:

**44** **Բերված փաստարկներից առանձնացնել երեքը, որոնք բացատրում են 1918 թ. մայիսյան հերոսամարտերին նախորդած ամիսներին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում թուրքերի տարածքային բռնազավթումների պատճառները.**

ա) Դրանք թուրք-պարսկական ռազմական համագործակցության արդյունք էին:
բ) Դրանք թուրքերի կողմից դիվանագիտական խաղերի և զինադադարի խախտման արդյունք էին:
գ) Բացասական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի կառավարողների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարի բացակայությունը:
դ) Վճռորոշ դեր խաղաց Թուրքիային նրա դաշնակից Բուլղարիայի ռազմական մեծ օժանդակությունը:
ե) Բացասական դեր խաղաց 1917 թ. վերջերին ռուսական բանակի հեռանալը ռազմաճակատից:

1) ա, բ, գ
2) բ, գ, ե
3) բ, գ, դ
4) ա, դ, ե





**Ռուսական կայսրության անկումից մինչև Հայաստանի Հանրապետության հռչակումը**

*Իրադրությունն Անդրկովկասում փետրվարյան հեղափոխությունից հետո*: Ինքնակալության տապալումը. երկիշխանության հաստատումը կենտրոնում և ծայրամասերում: Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ) ստեղծումը: Հեղափոխությունը և ազգային կուսակցությունները: Ժամանակավոր կառավարության դիրքորոշումն Արևմտյան Հայաստանի հարցում: Արևմտահայերի 1-ին համագումարը: Արևելահայ ազգային խորհրդի ստեղծումը:

*Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը*: Հոկտեմբերյան հեղափոխությունը: Անդրկովկասի քաղաքական ուժերի դիրքորոշումը դրա հանդեպ: Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը: Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը Անդրկովկասի հարցում. Ստ. Շահումյանը Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար: Ռուսաստանի ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:

Իրադրությունը Կովկասյան ռազմաճակատում: Երզնկայի զինադադարը: Հայկական ազգային զորամիավորումների ստեղծումը: Թուրքական հարձակման վերսկսումը:

Հայաստանը և Հայկական հարցը Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում: Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային: Թուրք-անդրկովկասյան բանակցությունները Տրապիզոնում: Անդրկովկասի անկախության հռչակումը:

*Թուրքերի ներխուժումն Արևելյան Հայաստան և Անդրկովկաս*: Թուրքական արշավանքն Անդրկովկաս. Կարսի, Ալեքսանդրապոլի, Սուրմալուի և այլ տարածքների զավթումը: Հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերը. Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի հաշտությունը: Հայերի մասնակցությունը Բաքվի պաշտպանությանը: Բաքվի գրավումը թուրքերի կողմից:

**Հայկական մշակույթը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին**

Հայ մշակույթի զարգացման նոր փուլը: Դպրոցը: Հայագիտությունը և բնական գիտությունները: Գրականությունը: Արվեստը. թատրոնը, երաժշտությունը, կերպարվեստը: Ճարտարապետությունը:

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

## ԲԱԺԻՆ Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

### Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը

*Իշխանության մարմինների ձևավորումը*: Իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ստեղծումը: Գավառային և քաղաքային ինքնավարություններ: Քայլեր ազգային արդարադատության համակարգի ստեղծման ուղղությամբ: Հայերենը պետական լեզու: Հանրապետության խորհրդանիշերը: Արևմտահայերի 2-րդ համագումարը: Անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը: Հայաստանի խորհրդարանի ընտրությունները:

Դիվանագիտական կապերը: Զինված ուժերի կազմակերպումը:

*Սոցիալ-տնտեսական դրությունը*: Տնտեսության կազմալուծված վիճակը: Արտակարգ միջոցառումներ սովը և հիվանդությունները հաղթահարելու ուղղությամբ: ԱՄՆ-ի օգնությունը: Գաղթականների և որբերի կարիքների հոգումը: Ջանքեր տնտեսությունը կազմակերպելու ուղղությամբ: Հողային ռեֆորմը: Կրթական-մշակութային ձեռնարկումներ. համալսարանի հիմնադրումը:

*Հասարակական-քաղաքական կյանքը*: Հանրապետությունում գործող հիմնական քաղաքական կուսակցությունները, արհեստակցական միությունները և հասարակական կազմակերպությունները: Հայ բոլշևիկների դիրքորոշումը:

*Բոլշևիկների Մայիսյան ապստամբությունը*: Արմենկոմի ստեղծումը: 1920 թ. մայիսմեկյան ցույցերը: Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի ստեղծումը: Բոլշևիկների ելույթները Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում և Զանգեզուրում: Դրանց ճնշումը բյուրոկառավարության կողմից: Մայիսյան ապստամբության հետևանքները:

### Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը

Հարաբերությունները Քառյակ միության երկրների հետ:

*Հայ-վրացական հարաբերությունները*: Վրաստանի տարածքային հավակնությունները: Հայ-վրացական պատերազմը: Լոռու «չեզոք գոտու» ստեղծումը: Տարածքային վեճերի լուծումը 1921 թ.:

*Հայ-ադրբեջանական հարաբերությունները*: Ադրբեջանի տարածքային հավակնությունները: Թուրքիայի, Անգլիայի և Խորհրդային Ռուսաստանի աջակցությունն Ադրբեջանին: Հայ-ադրբեջանական բանակցությունները: Անդրկովկասյան համա-





**39** **Կատարել համապատասխանեցում հայ արքաների և նրանց կառավարման տարեթվերի միջև.**

| | |
|---|---|
| ա) Արշակ 2-րդ | 1) 298-330 թթ. |
| բ) Վարազդատ | 2) 374-378 թթ. |
| գ) Տրդատ 3-րդ Մեծ | 3) 423-428 թթ. |
| դ) Վռամշապուհ | 4) 389-415 թթ. |
| | 5) 350-368 թթ. |

1) ա-3, բ-4, գ-1, դ-5
2) ա-1, բ-3, գ-5, դ-4
3) ա-5, բ-3, գ-2, դ-1
4) ա-5, բ-2, գ-1, դ-4

**40** **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1) Արմենական կուսակցության հիմնադրումը:
2) «Միություն ի փրկություն» կազմակերպության ստեղծումը:
3) Բարենորոգումների «Մայիսյան» ծրագրի ներկայացվելը սուլթանին:
4) Անդրանիկի գլխավորությամբ զինվորական խորհրդի ստեղծումը Սասունում:

ա) 1895 թ.
բ) 1903 թ.
գ) 1890 թ.
դ) 1885 թ.
ե) 1872 թ.

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե
2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ
3) 1-ե, 2-ա, 3-բ, 4-ա
4) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա

**41** **Նշված փաստարկներից որո՞նք 1259 թ. Հայաստանում ու Վրաստանում սկսված հակամոնղոլական ապստամբության պատճառ չեն հանդիսացել.**

ա) Հարկերի չափից ավելի ծանրացումը:
բ) Հայ-մոնղոլական դաշնագրի խախտումը Հեթում 1-ինի կողմից:
գ) Հայերին ու վրացիներին մոնղոլների դեմ հրահրելու Բյուզանդիայի քաղաքականությունը:
դ) Հայ և վրացի զինվորներին Եգիպտոսի դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների մտադրությունը:
ե) Մամլուքների հետ կնքված դաշինքը:

1) ա, բ, գ  2) բ, գ, ե  3) բ, դ, ե  4) ա, դ, ե

**35** **Հայ արքաների անունները դասավորել ըստ նրանց կառավարման հաջորդականության.**

ա) Լևոն 2-րդ
բ) Սմբատ 2-րդ
գ) Հեթում 1-ին
դ) Աշոտ 2-րդ
ե) Սմբատ 1-ին

1) դ, ե, բ, գ, ա  3) ե, դ, բ, ա, գ
2) ե, բ, ա, դ, գ  4) դ, գ, ա, ե, բ

**36** **Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորների զինաթափման սկիզբը:
բ) Էրզրումի գրավումը ռուսական բանակի կողմից:
գ) Սարիղամիշի ճակատամարտը:
դ) Հայ կամավորական ջոկատների կազմալուծումը և դրանցից հրաձգային գումարտակների ստեղծումը:

1) ա, գ, բ, դ  3) գ, ա, բ, դ
2) բ, ա, դ, գ  4) ա, դ, բ, գ

**37** **Հայոց ո՞ր թագավորին են պատկանում հետևյալ խոսքերը.** «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ և ես քեզ չեմ տալիս Հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:

1) Գագիկ Արծրունուն  3) Լևոն 2-րդին
2) Գագիկ 2-րդին  4) Աբասին

**38** **1920 թ. թուրք-հայկական պատերազմի հետ կապված ո՞վ է հայտնել հետևյալ կարծիքը.**

«Նման պատկերացումը ճակատագրական ազդեցություն է ունեցել բանակի մարտունակության վրա և պատճառ դարձել հոգեբանական անկման, որը հանգեցրել է նրա այն գիտակցությանը, թե իր ուժերը չնչին են հակառակորդի ահարկու ուժերի նկատմամբ»:

1) Դրոն  3) Ռուբեն Տեր-Մինասյանը
2) Սեպուհը  4) Թովմաս Նազարբեկյանը





դաշնություն ստեղծելու խնդիրը: Հայաստանի կառավարության քայլերը Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը կառավարելու ուղղությամբ: Ադրբեջանի կողմից Ղարաբաղի և Զանգեզուրի գեներալ-նահանգապետության ստեղծումը: Շուշիի հայ բնակչության ջարդը: Լեռնային Ղարաբաղի ազատագրումը: Ռուսական զորքի աջակցությամբ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին: Զանգեզուրի հերոսական ինքնապաշտպանությունը: Գարեգին Նժդեհ:

*Հայկական հարցը*: Փարիզի խաղաղության կոնֆերանսը: Հայկական պատվիրակությունների գործունեությունը: Սան Ռեմոյի կոնֆերանսը: Տերությունների դիրքորոշումը: Հայաստանի մանդատի հարցը. Ջ. Հարբորդի պատվիրակությունը: ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը չընդունելը: Սևրի պայմանագիրը: Իրադարձությունները Կիլիկիայում:

**Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում: Հայաստանի խորհրդայնացումը**

*Հայ-ռուսական հարաբերությունները*: Ոչ դյուրին հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո: Լ. Շանթի պատվիրակությունը. Մոսկվայի անավարտ բանակցությունները: Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը: Հայ-ռուսական բանակցությունների վերսկսվելը Երևանում. հոկտեմբերի 28-ի արձանագրությունը: Հայ-ռուսական պայմանագրի նախագիծը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի որոշումը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ:

*Թուրք-հայկական պատերազմը*: Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի մերձեցումը: Հայաստանը ռուս-թուրքական ռազմաքաղաքական ծրագրերում: Թուրք-հայկական պատերազմի սկիզբը: Պատերազմի անհաջող ընթացքը Հայաստանի համար. Կարսի և Ալեքսանդրապոլի կորուստը: Զինադադարի կնքումը և թուրք-հայկական պատերազմի ավարտը: Հայաստանի պարտության պատճառները: Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը:

*Հայաստանի Հանրապետության անկումը և Հայաստանի խորհրդայնացումը*: Հայ-ռուսական բանակցությունների եզրափակիչ փուլը: Քաղաքական ճգնաժամը. նոր կառավարության ստեղծումը Ս. Վրացյանի գլխավորությամբ: Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի և ռուսական զորքերի մուտքը Հայաստան. նոյեմբերի 29-ի հռչակագիրը: Խորհրդային Ադրբեջանի կառավարության նոյեմբերի 30-ի որոշումը: Երևանի դեկտեմբերի

2-ի համաձայնագիրը: Հայաստանի Հանրապետության անկման պատճառները:

## ԲԱԺԻՆ Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### Խորհրդային Հայաստանը 1920-1922 թվականներին

Հեղկոմները նոր իշխանության ժամանակավոր մարմիններ: ՀԿ(բ)Կ-ն կառավարող կուսակցություն: Հայաստանի Ռազմհեղկոմի ժամանումը Երևան, նրա առաջին դեկրետները: Դեկտեմբերի 2-ի համաձայնագրի խախտումը. զանգվածային բռնությունների կիրառումը:

Ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը Հայաստանում:

1921թ. փետրվարյան ապստամբության սկիզբը: Ապստամբների կողմից Երևանի գրավումը: Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը: Ապստամբության հետագա ընթացքը: Ռուսական 11-րդ կարմիր բանակի կողմից Երևանի գրավումը: Ապստամբության պարտությունը: Հայաստանի Ռազմհեղկոմի վերակառուցվելը ժողովրդական կոմիսարների խորհրդի: Ալ. Մյասնիկյան:

Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը: Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրությունը: Խորհրդային հանրապետությունների միավորման քաղաքականությունը: ԱԽՍՀՖՄ ստեղծումը: Անդրկովկասի խորհուրդների 1-ին համագումարը: ԱԽՖՍՀ սահմանադրության ընդունումը: ԽՍՀՄ խորհուրդների 1-ին համագումարը և ԽՍՀՄ կազմավորումը: Խորհրդային Հայաստանի ինքնիշխանության ձևական բնույթը ԽՍՀՄ-ի կազմում:

### Խորհրդային Հայաստանի միջազգային դրությունը 1920-1922 թվականներին

*Մոսկվայի պայմանագիրը*: Խորհրդային Հայաստանի տարածքային խնդիրները հարևանների հետ: Խորհրդային Ռուսաստանի զիջողական դիրքորոշումը Թուրքիայի հանդեպ: Ռուս-թուրք-ադրբեջանա-հայկական քառակողմ կոնֆերանսի ձախողումը: Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը: Հայաստանի տարածքների զիջումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին:

*Կարսի պայմանագիրը*: Թուրքիայի հետ Անդրկովկասի հանրապետությունների պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը: Կարսի Անդրկովկաս-Թուրքիա կոնֆերանսը: Հայկական պատվիրակության «Հուշագիրը»: 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը:





**30** **Բերված շարքերից ո՞րն է կազմված բացառապես զինվորականներից.**

1) Հովսեփ Օրբելի, Ավետիք Իսահակյան, Միքայել Պարսեղով
2) Հովհաննես Բաղրամյան, Աբրահամ Ալիխանյան, Հակոբ Մանանդյան
3) Մովսես Սիլիկյան, Լևոն Օրբելի, Ասքանազ Մռավյան
4) Նելսոն Ստեփանյան, Համազասպ Բաբաջանյան, Իվան Իսակով

**31** **1839 թ. թուրքական կառավարությունը հրապարակեց թանզիմաթ, որը նշանակում է.**

1) եկեղեցական կանոնադրություն
2) բարենորոգումների հրովարտակ
3) սահմանադրության նախագիծ
4) օրենքների ժողովածու

**32** **Ի՞նչ էր նշանակում Լոնդոնի կոնֆերանսում առաջ քաշված հայկական ազգային օջախի գաղափարը.**

1) Թուրքիայի արևելյան նահանգներում հայաբնակ տարածքի ստեղծում
2) Ալքայի երկրամասում հայերի վերաբնակեցման իրագործում
3) Ազգերի լիգայի կողմից Հայաստանի հովանավորության ստանձնում
4) Դեպի Խորհրդային Հայաստան հայրենադարձության կազմակերպում

**33** **Հայաստանի համար ի՞նչ հետևանք ունեցավ հակաարաբական 850-855 թթ. ապստամբությունը.**

1) ստացավ անկախություն
2) կորցրեց անկախությունը
3) վերականգնեց ներքին ինքնավարությունը
4) կորցրեց ինքնավարությունը

**34** **Ինչո՞վ է բացատրվում բանվոր դասակարգի և ինժեներա-տեխնիկական անձնակազմի քանակական աճը 1928-1940 թթ.**

1) առևտրի զարգացմամբ
2) նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ
3) ինդուստրացման իրականացմամբ
4) պարենմասնատրման կիրառմամբ

**22** Պայմանագրերը դասավորել ըստ կնքման ժամանակագրական հաջորդականության.

ա) Կարսի պայմանագիր  գ) Ալեքսանդրապոլի պայմանագիր
բ) Սևրի պայմանագիր  դ) Մոսկվայի պայմանագիր

1) բ, գ, դ, ա  2) ա, գ, դ, բ  3) գ, ա, բ, դ  4) բ, ա, գ, դ

**23** Ե՞րբ է սկսվել Արտաշես 2-րդի գահակալությունը.

1) Ք. ա. 25 թ.  2) Ք. ա. 23 թ.  3) Ք. ա. 21 թ.  4) Ք. ա. 30 թ.

**24** Ե՞րբ է Հայաստանն առաջին անգամ բաժանվել Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև.

1) 1441 թ.  2) 1599 թ.  3) 1555 թ.  4) 1455 թ.

**25** Նիկոլայ 2-րդ ցարը ե՞րբ է ստորագրել հայոց հոգևոր հաստատություններին պատկանող շարժական և անշարժ գույքի բռնագրավման մասին օրենքը.

1) 1896 թ. հունիսի 3-ին  3) 1895 թ. մայիսին
2) 1903 թ. հունիսի 12-ին  4) 1908 թ. հուլիսի 21-ին

**26** Ե՞րբ է Մոսկվա մեկնել Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությունը.

1) 1920 թ. մայիսին  3) 1920 թ. հոկտեմբերին
2) 1920 թ. օգոստոսին  4) 1920 թ. նոյեմբերին

**27** Ո՞ր պատմիչն է Պապին բնութագրել որպես «եռանդուն, խիզախ ու խելոք իշխողի».

1) Փավստոս Բուզանդը  3) Ամմիանոսը
2) Ապպիանոս ը  4) Հովիանոսը

**28** Բագրատունյաց թագավորության վերելքի շրջանում որքա՞ն էր հայոց բանակի թիվը.

1) 150 000  2) 300 000  3) 80 000-100 000  4) 180 000

**29** Արևմտահայերի առաջին համագումարում ո՞վ է ընտրվել Արևմտահայերի ազգային խորհրդի նախագահ.

1) Անդրանիկ Օզանյանը  3) Վահան Փափազյանը
2) Աբրահամ Գյուլխանդանյանը  4) Հակոբ Զավրիյանը





*Հայ-վրացական հարաբերությունները*: Լոռին բռնակցելու Վրաստանի քաղաքականությունը: 1921 թ. փետրվարի 11-ի ապստամբությունը: Լոռու գավառի ազատագրումը և միացումը Խորհրդային Հայաստանին:

*Զանգեզուրի գոյամարտը*: Խորհրդային Ադրբեջանի հրաժարվելը 1920 թ. նոյեմբերի 30-ի որոշումից: Գարեգին Նժդեհի դիրքորոշումը: Համազանգեզուրյան 1-ին համագումարը. երկրամասի անկախության հռչակումը: Համազանգեզուրյան 2-րդ համագումարը: Գարեգին Նժդեհը Լեռնահայաստանի վարչապետ: Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն: ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: Կարմիր բանակի ռազմական գործողությունները Զանգեզուրի դեմ: Նժդեհի կողմից պայքարի դադարեցումը: Զանգեզուրի գոյամարտի նշանակությունը:

*Լեռնային Ղարաբաղի խնդիրը*: Ադրբեջանի դեմ գործուն պայքարի դադարեցումը Լեռնային Ղարաբաղում: ՀԽՍՀ կառավարության 1921 թ. հունիսի 12-ի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: Լեռնային Ղարաբաղի հարցում էթնիկական սկզբունքներով առաջնորդվելու առաջարկների մերժումը Ադրբեջանի ղեկավարության կողմից: ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի և 5-ի նիստերը: Լեռնային Ղարաբաղի հանձնումը Ադրբեջանին:

**Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թվականներին**

*Սոցիալ-տնտեսական վերափոխումները*: Նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ): Հարկային նոր քաղաքականության էությունը: Հողային բարենորոգումների անցկացումը: Կոոպերացիայի ծավալումը: Տնտեսության վերականգնումը: Սարգիս Լուկաշին:

*Ինդուստրացման քաղաքականությունը*: Ինդուստրացման գործընթացի սկիզբը, դրա առջև դրված խնդիրները: Հնգամյա պլանների կազմումը: Ինդուստրացումը գերծանր խնդիր ԽՍՀՄ ժողովուրդների համար: Խորհրդային Հայաստանի ինդուստրացման ընթացքը, արդյունքները և հետևանքները: Սահակ Տեր-Գաբրիելյան:

*Գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը*: Բացասական միտումները գյուղատնտեսության ոլորտում 1920-ական թվականների վերջին: Գյուղացիության համատարած բռնի կոլեկտիվացումը: Կուլակության, որպես դասակարգի, վերացման քաղաքականությունը: Հարկային քաղաքականությունը կոլեկտի-

վացման ուժեղ լծակ: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. հուլիսյան խորհրդակցությունը: Հայաստանում գյուղացիության կոլեկտիվացման արդյունքները և հետևանքները:

*Հասարակական-քաղաքական կյանքը*: Կոմունիստական կուսակցության մենիշխանությունը: Զանգվածային ծերբակալություններն ու բռնությունները: Բռնությունների նոր փուլը:

**Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920-1941 թթ.)**

*Գիտությունը*: Հասարակական գիտություններ: Բնական գիտություններ: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի ստեղծումը:

Գրական կյանքը: Եղիշե Չարենց:

*Արվեստը*: Կերպարվեստ. Մարտիրոս Սարյան: Երաժշտական արվեստ. Ալեքսանդր Սպենդիարյան, Արամ Խաչատրյան: Թատրոն և կինո:

Ճարտարապետությունը: Ալեքսանդր Թամանյան:

**Հայկական սփյուռքը 1920-1930-ական թվականներին**

*Սփյուռքի առաջացումը*: Սփյուռքահայ հիմնական կենտրոնները: Սփյուռքահայերի ծանր վիճակը ապաստանած երկրներում:

*Հայկական հարցը 1921-1923 թթ.*: Հայկական հարցի լուծման վերաբերյալ սփյուռքահայերի հույսերի չարդարանալը: Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում: Սփյուռքի առջև կանգնած նոր խնդիրները: Սփյուռքահայությունը հայոց պահանջատիրության միակ արծարծող:

*Հայրենադարձությունը*: Հայրենադարձության առաջին քայլերը Հայաստանի Հանրապետության գոյության տարիներին: Հայ գաղթականության հարցի քննարկումները Ազգերի լիգայում: Ֆրիտյոֆ Նանսեն: Հայրենադարձությունը 1921-1936 թթ.: Հայրենակցական միությունների նախաձեռնությամբ Հայաստանում նոր բնակավայրերի հիմնումը:

**Խորհրդային Հայաստանը և հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թվականներ)**

Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: Ուժերի համախմբումը Խորհրդային Հայաստանում: Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Այլ զորային կազմավորումների շարքերում. պատերազմի հայ զորավարները և հերոսները:

**Խորհրդային Հայաստանը 1945-1985 թվականներին**

*Քաղաքական հալածանքները*: Բռնությունների նոր ալիքը





**16** **Ո՞վ էր 1920 թ. մայիսին Ալեքսանդրապոլի ապստամբների դեմ ուղարկված կառավարական ուժերի հրամանատարը.**

1) Սարգիս Մուսայելյանը
2) Արտաշես Մելքոնյանը
3) Ստեփան Ալավերդյանը
4) Սեպուհը

**17** **Ո՞րն է «ամիրսպասալար» տերմինի ճիշտ բացատրությունը.**

1) խնամակալ
2) ներքինի
3) սպարապետ
4) հազարապետ

**18** **Նէպ-ը տնտեսական որոշակի քաղաքականություն էր, որի նպատակն էր.**

1) վերականգնել քայքայված տնտեսությունը
2) իրականացնել կուլտուրական հեղափոխություն
3) ինդուստրացնել երկիրը
4) կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը

**19** **Նախնադարյան հասարակության շրջափուլերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) մեզոլիթ
բ) պալեոլիթ
գ) էնեոլիթ
դ) նեոլիթ

1) ա, գ, բ, դ 2) բ, ա, դ, գ 3) բ, ա, գ, դ 4) ա, բ, դ, գ

**20** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հազկերտ 2-րդի կողմից կրոնափոխության առաջարկը
բ) Մեծ Հայքի Արշակունիների թագավորության անկումը
գ) Նվարսակի պայմանագրի կնքումը
դ) Աշտիշատի եկեղեցական ժողովը

1) ա, դ, գ, բ 2) դ, բ, ա, գ 3) գ, ա, դ, բ 4) բ, դ, ա, գ

**21** **Արևմտահայերի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը դասավորել դրանց սկսվելու ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Սուետիայի գոյամարտը
բ) Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը
գ) Վանի ինքնապաշտպանությունը
դ) Ուրֆայի ինքնապաշտպանությունը

1) բ, ա, դ, գ 2) գ, բ, ա, դ 3) գ, ա, բ, դ 4) գ, դ, բ, ա

**8** **Ե՞րբ է Հայաստանում անցկացվել ԽՍՀՄ կազմից դուրս գալու անկախության հանրաքվեն.**

1) 1988 թ. հունիսի 15-ին
2) 1991 թ. սեպտեմբերի 21-ին
3) 1965 թ. ապրիլի 24-ին
4) 1990 թ. մայիսի 20-ին

**9** **Ո՞վ է Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Վանի) հիմնադիրը.**

1) Արամեն
2) Սարդուրի 1-ինը
3) Իշպուինին
4) Արգիշթի 1-ինը

**10** **Ինչպե՞ս է կոչվել Խոսրով Կոտակի կողմից կառուցված քաղաքը.**

1) Խոսրովակերտ
2) Դվին
3) Խոր Վիրապ
4) «Նոր քաղաք»

**11** **Ո՞ր թագավորի օրոք Անին հռչակվեց մայրաքաղաք.**

1) Աշոտ 2-րդի
2) Սմբատ 2-րդի
3) Աշոտ 3-րդի
4) Հովհաննես - Սմբատի

**12** **Շահ Աբասի կողմից որքա՞ն հայ բռնագաղթեցվեց Պարսկաստան.**

1) 100 000 2) 150 000 3) 300 000 4) 500 000

**13** **Ո՞վ է շարադրել Դավիթ Բեկի պատմությունը.**

1) Եսայի Հասան -Ջալալյանը
2) Ստեփանոս Շահումյանը
3) Աբրահամ Երևանցին
4) Միքայել Չամչյանը

**14** **Ո՞վ էր այն եգիպտահայ գործիչը, որը Գևորգ 5-րդ կաթողիկոսի կողմից լիազորվել էր տերություններին ներկայացնելու հայկական բարենորոգումների խնդիրը.**

1) Նուբար փաշան
2) Պողոս Նուբար փաշան
3) Մկրտիչ Փորթուգալյանը
4) Խաչատուր Կարճիկյանը

**15** **Ո՞րն է հայկական գեղարվեստական առաջին ֆիլմը.**

1) «Պեպոն»
2) «Եռանկյունին»
3) «Նամուսը»
4) «Նռան գույնը»





հետպատերազմյան տարիներին: Գաղափարական հալածանքներ գիտության և մշակույթի ճանաչված գործիչների նկատմամբ: 1949 թ. հունիսի 14-ի զանգվածային աքսորը:

*Անհատի պաշտամունքի քննադատությունը*: Ի. Ստալինի մահը: Համակարգը վերափոխելու անհրաժեշտությունը: ԽՄԿԿ 20-րդ համագումարի դերը ստալինյան չարագործությունները դատապարտելու գործում: ԽՄԿԿ Կենտկոմի 1956 թ. հունիսի 30-ի «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» որոշումը: Բռնադատվածների գործերը ստուգող և վերանայող հանձնաժողովի ստեղծումը Հայաստանում: Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը:

*Ազգային զարթոնքը*: 1965 թ. ապրիլի 24-ի համազգային ցույցը Երևանում: Ցուցարարների պահանջները: Ցույցի ցրումը: 1960-70-ական թվականների ընդհատակյա կազմակերպությունները: Հանրապետության ղեկավարության ազգանպաստ քայլերը:

Հասարակական-քաղաքական կյանքի լճացումը: Սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի հասունացումը:

**Խորհրդային Հայաստանը 1985-1991 թվականներին**

Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցի սրումը ԽՍՀՄ-ում:

*Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի նոր փուլը*: Արցախյան շարժման սկիզբը: Համերաշխության զանգվածային ելույթները Հայաստանում: ԽՍՀՄ-ի և հանրապետության ղեկավարության դիրքորոշումը: «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը: Սումգայիթյան ողբերգությունը: Ազգային-ազատագրական պայքարի վերելքը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստը: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի գործունեությունը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. նոյեմբերի 24-ի որոշումը: Բռնագաղթ:

*Ժողովրդական շարժման խորացումը*: Համազգային շարժումը: Լեռնային Ղարաբաղում «Կառավարման հատուկ կոմիտեի» ստեղծումը: Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կազմակերպության ստեղծումը և գործունեությունը: Արցախի հիմնախնդրի լուծման ուղիների որոնումը: ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը:

## ԲԱԺԻՆ Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

**Հայաստանը անկախ պետության կերտման ճանապարհին**

*Հայաստանի անկախության հռչակման գործընթացը*:

Անկախ պետականության վերականգնման խնդրի առաջին պլան մղվելը: 1990 թ. մայիսի 20-ի ընտրությունները: Հայաստանի անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագիրը. անկախ պետականության վերականգնման գործընթացի սկիզբը: Հայաստանի Գերագույն խորհրդի 1991 թ. մարտի 1-ի որոշումը ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու հանրաքվե անցկացնելու վերաբերյալ: 1991 թ. օգոստոսի 19-ի խռովության ձախողումը Մոսկվայում, ԽՍՀՄ փլուզման արագացումը: 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեն. Հայաստանի անկախության հռչակումը: Բելովեժյան համաձայնագիրը: ԽՍՀՄ-ի փլուզումը: ԱՊՀ-ի ստեղծումը:

*Հասարակական-քաղաքական կյանքը 1990-ական թվականներին*: «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ 1991 թ. օրենքը: Ազգային ավանդական կուսակցությունների գործունեության վերականգնումը: Նոր կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: ՀՀ նախագահի առաջին ընտրությունները: Հետխորհրդային առաջին բազմակուսակցական խորհրդարանը: Հայ հեղափոխական դաշնակցության գործունեության կասեցումը: 1995 թ. խորհրդարանական ընտրությունները և Սահմանադրության ընդունումը (1995 թ. հուլիսի 5): Ներքաղաքական ճգնաժամը: ՀՀ նախագահի երկրորդ և երրորդ ընտրությունները:

### Արցախի ազգային-ազատագրական պայքարը

Նոր բռնություններ Արցախում 1990-1991 թթ.: «Օղակ» օպերացիան: Հայ-ադրբեջանական պատերազմի սկիզբը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը: ԵԱՀԽ-ի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումները Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ: Ադրբեջանի պատերազմը ԼՂՀ-ի դեմ: Շուշիի, Լաչինի և հայկական մյուս տարածքների ազատագրումը: Ադրբեջանի լայնածավալ հարձակման ձախողումը: Զինադադարի կնքումը (1994 թ. մայիս):

### Հայկական սփյուռքը ժամանակակից փուլում

*Զանգվածային հայրենադարձությունը*: Հայկական հողերի վերադարձի հարցը Պոտսդամի կոնֆերանսում: Ազգային կուսակցությունների և կազմակերպությունների գործունեության ակտիվացումը Սփյուռքում: ԽՍՀՄ կառավարության որոշումը ներգաղթ կազմակերպելու մասին: 1946-1948 թթ. զանգվածային հայրենադարձությունը: Հայրենադարձության տեմպերի նվազման





## ԹԵՍՏ 2

Ա մակարդակ

**1** Ե՞րբ է կառավարել Արտաշես 1-ինը.

1) Ք. ա. 220-201 թթ.
2) Ք. ա. 189-160 թթ.
3) Ք. ա. 115-95 թթ.
4) Ք. ա. 95-55 թթ.

**2** Ե՞րբ է քրիստոնեությունը Հայաստանում ընդունվել որպես պետական կրոն.

1) 311 թ. 2) 313 թ. 3) 301 թ. 4) 401 թ.

**3** Ե՞րբ է գումարվել Դվինի եկեղեցական ժողովը, որը պավլիկյաններին դատապարտող որոշումներ է ընդունել.

1) 719 թ. 2) 622 թ. 3) 775 թ. 4) 872 թ.

**4** Ե՞րբ է ավարտվել Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցումը.

1) 990 թ. 2) 1010 թ. 3) 1021 թ. 4) 1001 թ.

**5** Ե՞րբ է կնքվել Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը.

1) 1829 թ. սեպտեմբերի 2-ին
2) 1856 թ. մարտին
3) 1878 թ. փետրվարի 19-ին
4) 1828 թ. փետրվարի 10-ին

**6** Ե՞րբ է տեղի ունեցել Հայաստանի անկախ հանրապետության հռչակումը.

1) 1918 թ. մայիսի 24-ին
2) 1918 թ. մայիսի 26-ին
3) 1918 թ. մայիսի 28-ին
4) 1918 թ. հունիսի 4-ին

**7** Ե՞րբ է տեղի ունեցել համալսարանի հանդիսավոր բացումը.

1) 1917 թ. 2) 1918 թ. 3) 1919 թ. 4) 1920 թ.

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

| ԹԵՍՏ 1 | | | |
|---|---|---|---|
| Ա մակարդակ | | | |
| 1 | 2 | 26 | 2 |
| 2 | 2 | 27 | 2 |
| 3 | 3 | 28 | 3 |
| 4 | 2 | 29 | 2 |
| 5 | 2 | 30 | 2 |
| 6 | 3 | 31 | 4 |
| 7 | 2 | 32 | 2 |
| 8 | 3 | 33 | 2 |
| 9 | 3 | 34 | 2 |
| 10 | 2 | 35 | 1 |
| 11 | 1 | 36 | 2 |
| 12 | 1 | 37 | 3 |
| 13 | 4 | 38 | 3 |
| 14 | 1 | 39 | 4 |
| 15 | 2 | 40 | 1 |
| 16 | 4 | 41 | 1 |
| 17 | 2 | 42 | 2 |
| 18 | 2 | 43 | 2 |
| 19 | 4 | 44 | 1 |
| 20 | 4 | 45 | 1 |
| 21 | 3 | 46 | 1 |
| 22 | 3 | 47 | 1 |
| 23 | 2 | 48 | 1 |
| 24 | 3 | 49 | 1 |
| 25 | 1 | 50 | 1 |

| ԹԵՍՏ 1 | | | |
|---|---|---|---|
| Բ մակարդակ | | | |
| 51 | 1 | 66 | 3 |
| 52 | 2 | 67 | 4 |
| 53 | 2 | 68 | 1 |
| 54 | 3 | 69 | 3 |
| 55 | 2 | 70 | 1 |
| 56 | 4 | 71 | 2 |
| 57 | 2 | 72 | 1 |
| 58 | 2 | 73 | 4 |
| 59 | 2 | 74 | 3 |
| 60 | 2 | 75 | 3 |
| 61 | 1 | 76 | 4 |
| 62 | 1 | 77 | 3 |
| 63 | 2 | 78 | 4 |
| 64 | 2 | 79 | 2 |
| 65 | 1 | 80 | 3 |





պատճառները: Հայրենադարձությունը հետագա տասնամյակներին:

*Սփյուռքի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական վիճակը*: Սփյուռահայերի տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին: ԽՍՀՄ-ի կազմալուծումը և Սփյուռքի աշխարհագրական սահմանների ընդլայնումը: Սփյուռքահայ ժամանակակից սերունդների տնտեսական բարվոք վիճակը: Նոր մոտեցումներ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրների նկատմամբ: Հայ դատի հանձնախմբերի գործունեությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

## Հայկական մշակույթը 1940-1990-ական թվականներին

*Գիտության զարգացումը*: Գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Բնական և տեխնիկական գիտությունների զարգացումը: Հայագիտության զարգացումը: Հայկական հանրագիտարանի հրատարակումը:

*Արվեստը*: Երաժշտությունը: Թատրոնը և կինոն: Կերպարվեստը: Ճարտարապետությունը:

## ԹԵՍՏԻ ԹԵՄԱՏԻԿ-ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Թեմատիկ-բովանդակային առումով թեստի Ա և Բ մակարդակների առաջադրանքները ոչ բոլոր դեպքերում են կազմվել նույն սկզբունքով:

Ուղեցույցում ներկայացված թեստի օրինակելի նմուշներում Ա մակարդակի 50 առաջադրանքները ժամանակագրական առումով բաշխվել են համամասնորեն: Դրանցում ներառվել են հայոց պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանի վերաբերյալ գրեթե նույն թվով հարցեր: Միաժամանակ դրանցում, որպես կանոն, արտացոլվել են «Հայոց պատմության» ուղեցույցի բովանդակային դասիչի բոլոր թեմաները: Առաջադրանքներում տեղ են գտել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի և մշակույթի վերաբերյալ բազմաբնույթ հարցեր:

Չնայած Բ մակարդակի առաջադրանքները կազմելիս նույնպես պահպանվել է ժամանակագրական ու բովանդակային որոշակի համամասնություն, այդուհանդերձ, նկատի ունենալով այդ մակարդակի առաջադրանքների առանձնահատկությունները և թվով ավելի քիչ լինելը, պարտադիր չի համարվել, որ դրանք արտացոլեն բովանդակային դասիչում ընդգրկված բոլոր թեմաները:





**79** Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Իրադարձությունը | N | Տարեթիվը | N | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ջիրավի ճակատամարտը | 1 | 337 թ. | 1 | Վահան Մամիկոնյան |
| 2 | Վահանանց պատերազմը | 2 | 571-572 թթ. | 2 | Հովհաննես Բ |
| 3 | Հայ-արաբական պայմանագրի կնքումը | 3 | 371 թ. | 3 | Վաչե Մամիկոնյան |
| 4 | Կրտսեր Վարդանի ապստամբությունը | 4 | 481-484 թթ. | 4 | Թեոդորոս Ռշտունի |
| | | 5 | 652 թ. | 5 | Մուշեղ Մամիկոնյան |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 5 | 5 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 5 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 5 | 4 |
| 4 | 2 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 3 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 2 | 5 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 3 |
| 2 | 4 | 2 |
| 3 | 5 | 4 |
| 4 | 2 | 1 |

**80** Համապատասխանեցնել իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը, վայրը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Իրադարձություն | N | Տարեթիվը | N | Գործիչը | N | Վայրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համազանգեզուրյան 2-րդ համագումարը | 1 | 1920 թ. նոյեմբեր | 1 | Սարգիս Կասյան | 1 | Լոնդոն |
| 2 | Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի ողջույնի հեռագիրը Վ. Լենինին | 2 | 1991 թ. ապրիլ-մայիս | 2 | Ավետիս Ահարոնյան | 2 | Գետաշեն |
| 3 | Հայկական ազգային օջախ գաղափարը | 3 | 1921 թ. ապրիլ | 3 | Թաթուլ Կրպեյան | 3 | Տաթևի վանք |
| 4 | «Օղակ» օպերացիան | 4 | 1921 թ. փետրվար-մարտ | 4 | Գարեգին Նժդեհ | 4 | Իջևան |

1)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 4 | 4 | 3 |
| 2 | 3 | 2 | 4 |
| 3 | 1 | 3 | 2 |
| 4 | 2 | 1 | 1 |

2)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 2 | 2 |
| 2 | 4 | 3 | 1 |
| 3 | 1 | 4 | 3 |
| 4 | 2 | 1 | 4 |

3)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 3 |
| 2 | 1 | 1 | 4 |
| 3 | 4 | 2 | 1 |
| 4 | 2 | 3 | 2 |

4)

| | | | |
|---|---|---|---|
| 1 | 3 | 1 | 4 |
| 2 | 1 | 2 | 2 |
| 3 | 4 | 4 | 1 |
| 4 | 2 | 3 | 3 |

**77** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**

«…Հիշում եմ, ինչպես բերդում ապաստանած գյուղացիները տվեցին իրենց բոլոր անասունները կայազորին իբրև կերակուր, թե ինչպես մեր հարուստները… տվեցին իրենց հացի բոլոր մեծամեծ պաշարները… հիշում եմ նույնպես, թե ինչպես մեր հայերը գիշերներն իրենց ուսերի վրա տանում էին հացահատիկի ծանր պարկերը… գյուղի ջրաղացները, ուր… արագ աղում էին հացահատիկը և էլի ետ էին ուղարկում բերդ: Առանց այդ օգնության կայազորը երբեք չէր կարող տանել վեցշաբաթյա պաշարումը…»:

*Ո՞ր նշանավոր իրադարձության մասին է դրա մասնակից Լազարյանի վկայությունը.*

1) Բայազետի 1877 թ. պաշտպանության
2) Հալիձորի 1727 թ. պաշտպանության
3) Շուշիի 1826 թ. պաշտպանության
4) Բայազետի 1829 թ. պաշտպանության

**78** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**

«…Հիշում եմ, ինչպես բերդում ապաստանած գյուղացիները տվեցին իրենց բոլոր անասունները կայազորին իբրև կերակուր, թե ինչպես մեր հարուստները… տվեցին իրենց հացի բոլոր մեծամեծ պաշարները… հիշում եմ նույնպես, թե ինչպես մեր հայերը գիշերներն իրենց ուսերի վրա տանում էին հացահատիկի ծանր պարկերը… գյուղի ջրաղացները, ուր… արագ աղում էին հացահատիկը և էլի ետ էին ուղարկում բերդ: Առանց այդ օգնության կայազորը երբեք չէր կարող տանել վեցշաբաթյա պաշարումը…»:

*Լազարյանն ո՞ւմ գործունեությանն է տվել նման բարձր գնահատական.*

1) Մխիթար Սպարապետ և Տեր-Ավետիս
2) Սամսոն Տեր-Պողոսյան
3) Մելիք Մարտիրոսյան
4) Սաֆար և Ռոստոմ Թարխանյաններ





## ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միասնական քննության թեստի բոլոր 80 առաջադրանքները կազմված են ճիշտ պատասխանն ընտրելու սկզբունքով, այսինքն՝ տրված չորս պատասխաններից միայն մեկն է ճիշտ: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1, սխալ պատասխանը կամ պատասխանի բացակայությունը՝ 0 միավոր: Առաջադրանքը կատարված է համարվում, եթե քննություն հանձնողն ընտրում է ճիշտ պատասխան: Այսինքն՝ 80 առաջադրանքներին տրվող միավորների ընդհանուր գումարը կազմում է 80:

Առաջադրանքների պահանջները հիմնականում ձևակերպվում են հարցերի (ա) կամ հանձնարարությունների (բ) ձևով, օրինակ՝

ա) Ե՞րբ է Կիլիկիան հռչակվել թագավորություն:

բ) Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ:

Որոշ դեպքերում առաջադրանքներում առաջարկվող պատասխանները շարունակում են պահանջի միտքը, օրինակ՝

Նէպ-ը տնտեսական որոշակի քաղաքականություն էր, որի նպատակն էր…

Բոլոր դեպքերում լուծման սկզբունքը նույնն է. առաջարկվող հնարավոր չորս պատասխաններից պետք է ընտրել մեկը:

Առաջին թեստի առաջադրանքների հիման վրա հարկ ենք համարում որոշ բացատրություններ տալ դրանց կատարման վերաբերյալ:

Ա մակարդակ (50 առաջադրանք)

- **Տարեթվերի իմացություն**

Բոլոր 12 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ե՞րբ են ստեղծվել հայոց գրերը:

Տրված է հնարավոր պատասխանի չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Փաստերի և երևույթների իմացություն**

Բոլոր 14 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ո՞վ է Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադիրը:

Տրված է հնարավոր պատասխանի չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Տրված 4 առաջադրանքների պահանջները հիմնականում ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ի՞նչ է նշանակում սղնախ:

Որոշ դեպքերում առաջադրանքների համար առաջարկվող պատասխանները շարունակում են պահանջի միտքը: Օրինակ՝ Անդրկովկասի Կոմիսարիատը 1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում ստեղծված իշխանության մարմին էր, որի խնդիրն էր...

Երկու դեպքերում էլ տրված են հնարավոր պատասխանի չորս տարբերակներ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն.**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ ինչո՞ւ էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսը դեմ Հովսեփ Էմինի ծրագրերին:

Տրված է հնարավոր պատասխանի չորս տարբերակներ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Դեպքերի հաջորդական դասավորություն**

Տրված 8 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ հայոց արքաներին դասավորել ըստ նրանց կառավարման հաջորդականության:

Ներկայացված է արքաների անվանացանկ և առաջարկված է հնարավոր պատասխանների չորս տարբերակ, որոնցից շրջանավարտը ընտրում է միակ ճիշտ պատասխանը: Այս տիպի Ա մակարդակի առաջադրանքներում անունների և





**75** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Շահ Աբասի կողմից հայերի բռնագաղթեցումը:
բ) Վահկա բերդի գրավումը Ռուբինյանների կողմից:
գ) Պավլիկյան շարժման ճնշումը Վասիլ 1-ինի կողմից:
դ) Հեթումյան արքայատոհմի հաստատումը Կիլիկյան Հայաստանում:
ե) Օսմանյան պետության հիմնադրումը:
զ) Մոնղոլների գլխավոր արշավանքը Հայաստան:
է) Գրիգոր Մամիկոնյանի գլխավորած հակաարաբական ապստամբությունը:
ը) Դվինի ազատագրումը Զաքարյանների կողմից:
թ) Մանազկերտի ճակատամարտը:
ժ) Գագիկ 1-ինի գահակալության սկիզբը:

1) է, ժ, թ, բ, ը, դ, ե, զ, ա, գ
2) գ, ժ, բ, ա, ը, է, զ, ե, թ, դ
3) է, գ, ժ, թ, բ, ը, դ, զ, ե, ա
4) գ, է, ժ, բ, ը, դ, ե, թ, զ, ա

**76** **Պատմական գործիչների անունները դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության.**

ա) Դավիթ Բեկ
բ) Ներսես Աշտարակեցի
գ) Մկրտիչ Յաղուբյան
դ) Շահամիր Շահամիրյան
ե) Սմբատ Գունդստաբլ
զ) Համազասպ Բաբաջանյան
է) Գևորգ Չավուշ
ը) Մխիթար Գոշ
թ) Իսրայել Օրի
ժ) Իգոր Մուրադյան

1) ը, թ, ե, է, դ, բ, գ, ա, զ, ժ
2) ա, բ, գ, թ, դ, է, ը, ե, ժ, զ
3) գ, դ, բ, թ, ա, զ, ե, ը, է, ժ
4) ը, ե, թ, ա, դ, բ, գ, է, զ, ժ

**73** **Բերված պատճառներից ընտրել երեքը, որոնք նպաստել են արևելահայ և արևմտահայ իրականության մեջ քաղաքական խմբակների և կազմակերպությունների հանդես գալուն.**

ա) Արևմտահայերի մինչ այդ տեղի ունեցած զանգվածային ջարդերը:
բ) Բալկանյան ժողովուրդների ըմբոստացումը թուրքական բռնապետության դեմ:
գ) Ռուսական իշխանությունների քաջալերիչ գործունեությունը:
դ) Հայ ազգային-քաղաքական շրջանակներում զենքի ուժով Արևմտյան Հայաստանն ազատագրելու գաղափարի հասունացումը:
ե) Ժամանակի հայ գրականության մեջ անցյալի պատմության հերոսական դրվագների քարոզչությունը և հայությանը դեպի ազատագրական պայքար նպատակաուղղելը:
զ) Մինչ այդ ստեղծված հայ ազգային կուսակցությունների ծավալած գործունեությունը:
է) Սասունում նախապատրաստվող ապստամբությանն օժանդակելու ցանկությունը:

1) ա, բ, դ
2) գ, ե, է
3) դ, ե, զ
4) բ, դ, ե

**74** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք Ղարաբաղյան հիմնահարցը բարձրացնելու պատճառ հանդիսացան.**

ա) Մարզը հայաթափելու և ադրբեջանցիներով բնակեցնելու քաղաքականությունը:
բ) Ինքնավար մարզի լուծարումը:
գ) Հայ բնակչության իրավունքների ու ազգային արժանապատվության ոտնահարումը:
դ) Կյանքի տարրական պայմանների բացակայությունը:
ե) Ադրբեջանի նոր սահմանադրության ընդունումը:
զ) ԼՂԻՄ-ի մայրաքաղաքը Ստեփանակերտից այլ վայր տեղափոխելը:
է) Հայերին ադրբեջանական բանակ զորակոչելը:

1) ա, բ, է
2) գ, դ, զ
3) ա, գ, դ
4) բ, գ, ե





իրադարձությունների շարքը երկար չէ և սահմանափակվում է 4-5 անուններով կամ դեպքերով:

- **Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի ձևով: Օրինակ՝ հայոց ո՞ր արքայի կառավարման շրջանին են վերաբերվում Մովսես Խորենացու հետևյալ խոսքերը:

Առաջադրանքում բերվում են պատմիչի խոսքերը, որից հետո առաջարկվում է հնարավոր պատասխանի չորս տարբերակ: Դրանցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ անունը:

- **Համապատասխանեցում**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվան հետ:

Առաջադրանքի ձևակերպումից հետո տրված է չորս անվանումներից կազմված ստեղծագործությունների շարք և դրանց հնարավոր հեղինակների հինգ անուններից կազմված շարք (կարող էր լինել նաև հակառակ տարբերակը): Շրջանավարտը պետք է գտնի երկրորդ շարքում եղած ավելորդ անունը և այն բացառելով՝ կազմի չորս ճիշտ զույգերից կազմված շարք: Առաջադրանքի վերջում տրված է հնարավոր պատասխանի չորս տարբերակ: Իր ստացած պատասխանը համեմատելով դրանց հետ, շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը:

## Բ մակարդակ (30 առաջադրանք)

Ի տարբերություն Ա մակարդակի, որտեղ առաջադրանքները պարզ հարցադրումներից ու պահանջներից աստիճանաբար բարդանում են և գերազանցապես պարզ և միջին բարդության հարցեր են, Բ մակարդակի առաջադրանքներն ավելի բարդ են և շրջանավարտից պահանջում են «Հայոց պատմություն» առարկայի խոր իմացություն: Ճիշտ է, Բ մակարդակի առաջադրանքների մեծ մասը կազմված են նույն սկզբունքներով, որոնք հանդիպում ենք Ա մակարդակում, բայց դրանց պատասխանելու համար պահանջվում է և՛ անհամեմատ ավելի շատ ժամանակ, և՛ ավելի մեծ ծավալի գիտելիքներ համադրելու, և՛ տրամաբանելու կարողություն: Ըստ որում, որոշ տիպի առաջադրանքներ աստիճանաբար բարդանում են:

- **Պատմական փաստերի համադրում և խմբավորում**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացվում են հարցերի (ա) կամ հանձնարարությունների (բ) ձևով: Օրինակ՝

ա) Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

բ) Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել հայ-արաբական 652 թ. պայմանագրում:

Առաջին դեպքում բերվում են 4 պնդումներ, որոնցից շրջանավարտը պետք է ընտրի միակ ճիշտ պատասխանը: Ակնհայտ է, որ երկրորդ դեպքում առաջադրանքն ավելի բարդ է և պահանջում է գիտելիքները համադրելու կարողություն: Առաջադրանքում բերված յոթ պայմաններից շրջանավարտը պետք է առանձնացնի երեքը: Իր ընտրած կետերը նա պետք է համեմատի առաջադրանքի վերջում տրված պատասխանի չորս հնարավոր տարբերակների հետ և ընտրի միակ ճիշտ պատասխանը:

- **Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն**

Տրված 4 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

Բոլոր դեպքերում բերված է չորս տերմին կամ հասկացություն և տրված է դրանց բովանդակության կամ նշանակության բացատրության հինգ տարբերակ: Շրջանավարտը նախ պետք է որոշի չորս ճիշտ զույգերը՝ բացառելով բացատրության ավելորդ տարբերակը: Դրանից հետո նա իր ստացած պատասխանը համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի չորս հնարավոր տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:





**71** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.**

1) մանդատ
2) ԺՏԽ
3) «Ղարաբաղ» կոմիտե
4) ՆԳՆ
5) կոոպերացիա

ա) իրավապահ մարմին
բ) տնտեսավարման ձև
գ) որևէ երկրի հովանավորության ստանձնում
դ) 1920-ական թվականներին Հայաստանում տնտեսական շինարարության գործն իրականացնող մարմին
ե) Հայաստանում և Արցախում ծավալվող շարժումը կոորդինացնող մարմին
զ) արտակարգ հանձնաժողով

1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ
2) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-բ
3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ, 5-գ
4) 1-գ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-դ

**72** **Մատնանշել երեք պատճառներ, որոնք նպաստեցին Արևմտյան Հայաստանի հայ նախարարների իշխանության թուլացմանը Հուստինիանոս կայսեր օրոք.**

ա) Հայերի հակաբյուզանդական հաճախակի ելույթները:
բ) Ժառանգության իրավունքի մասին նոր օրենքների ընդունումը:
գ) Հայ նախարարների փոխադարձ թշնամանքը:
դ) Հարավ-արևմտյան գավառների սատրապների ժառանգական իշխանության վերացումը:
ե) Նոր վարչական բաժանումները:
զ) Հաճախ կրկնվող պարսկա-բյուզանդական պատերազմները:
է) Հուստինիանոսի կողմից նոր աշխարհագիր անցկացնելը:

1) բ, դ, ե
2) ա, գ, է
3) բ, ե, զ
4) ա, զ, է

**69** **Նշված պայմաններից ընտրել չորսը, որոնք տեղ են գտել 1895 թ. ապստամբությունից հետո Թուրքիայի կառավարության և զեյթունցիների միջև կնքված համաձայնագրում.**

ա) Հնչակյաններին թույլ էր տրվում պետության ծախսերով հեռանալ Թուրքիայից:
բ) Զեյթունցիներին տրվում էր ինքնավարություն:
գ) Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ:
դ) Զեղյալ էին հայտարարվում հարկային ապառքները:
ե) Տասանորդի հարկն այսուհետև հավաքվելու էր հայ գյուղացիների միջոցով:
զ) Մարաշում ստեղծվելու էին տերությունների հյուպատոսություններ:
է) Իշխանությունները պարտավորվում էին զինաթափել և պատժել քուրդ ելուզակներին:

1) ա, գ, ե, զ 3) ա, գ, դ, զ
2) բ, դ, ե, է 4) ա, դ, ե, զ

**70** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) Երևանյան զորախումբ
2) Հայկական բանակային կորպուս
3) Արարատյան զորամիավորում
4) Երկրապահ դիվիզիա
5) Ազգային դիվիզիա

ա) Հայկական Ազգային բյուրոյի որոշմամբ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կամավորական ջոկատների միավորումից հետո ստեղծված զորախումբը
բ) Ռուս-թուրքական 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրով Արևմտյան Հայաստանում ստեղծված նահանգներում նահանգապետերի տնօրինության տակ գտնվող զորքերին տրված անվանումը
գ) Ռուսական հրամանատարության հրամանով 1917 թ. վերջերին կազմավորված զորամիավորում, որի հրամանատարը գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր
դ) Արևմտահայերից կազմված դիվիզիա, որի հրամանատարն Անդրանիկն էր
ե) 1918 թ. մայիսյան հերոսամարտերի օրերին գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ կռվող զորամիավորման անվանումը
զ) Հայրենական պատերազմի տարիներին խորհրդային բանակի կազմում ձևավորված հայկական զորամիավորումներին տրված անվանումը

1) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ, 5-զ 3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-ա, 5-դ
2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ 4) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-ա





- **Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների ու հետևանքների իմացություն**

Տրված 6 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ` բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսացել են Վահանանց պատերազմի պատճառ:

Շրջանավարտը առաջադրանքում առաջարկված վեց (այլ դեպքում յոթ) փաստարկներից (այլ դեպքում պայմաններից) ընտրում է, իր կարծիքով, ճիշտ երեք պատասխանները: Ստացած պատասխանը նա համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի չորս հնարավոր տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Դեպքերի հաջորդական դասավորություն**

Առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ` պատմական գործիչներին դասավորել ըստ գործունեության հաջորդականության:

Տրված 6 առաջադրանքները նույնանման չեն և ունեն բարդության տարբեր աստիճան: Առաջադրանքներից չորսում տրված է պատմական գործիչների կամ իրադարձությունների շարք` բաղկացած 7 կամ 10 անվանումներից: Շրջանավարտից պահանջվում է գտնել հաջորդական ճիշտ դասավորությունը: Օգտագործելով տարբեր թեմաներից ունեցած իր գիտելիքները` շրջանավարտը նախ կազմում է շարքի իր տարբերակը: Դրանից հետո այն համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի հնարավոր չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

Մյուս երկու առաջադրանքների պահանջն այլ է: Տրված են յոթ իրադարձություններից կազմված շարքեր և պահանջվում է գտնել այն մեկ կամ երկու իրադարձությունները, որոնք խախտում են շարքի հաջորդական դասավորությունը: Այս դեպքում շրջանավարտը նախ պետք է ուշադիր ուսումնասիրի շարքը և առանձնացնի նրա հաջորդական դասավորությունը խախտող իրադարձությունը (կամ իրադարձությունները): Դրանից հետո իր ստացած պատասխանը նա համեմատում է առաջադրանքում առաջարկված պատասխանի հնարավոր չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Աշխատանք սկզբնաղբյուրների հետ**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հարցի (ա) կամ հանձնարարության (բ) ձևով: Օրինակ`

ա) Ո՞ր գրքից է հետևյալ կոչը:
բ) Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:

Երկու դեպքում էլ շրջանավարտը ծանոթանում է սկզբնաղբյուրից բերված հատվածին, ընտրում պատասխանը, այն համեմատում առաջադրանքում առաջարկված պատասխանի հնարավոր չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

- **Համապատասխանեցում**

Տրված 5 առաջադրանքների պահանջները ներկայացված են հանձնարարության ձևով: Օրինակ՝ կատարել համապատասխանեցում: Պատասխանները լրացնել համաձայն առաջին խմբում առաջարկված հերթականության:

Առաջադրանքները նույնատիպ չեն և աստիճանաբար բարդանում են: Դրանցից երկուսը (65-66) կազմված են Ա մակարդակի համանման առաջադրանքների սկզբունքով: Պարզապես Բ տարբերակում պատմական գործիչների շարքը չորսի փոխարեն կազմված է 5 կամ 6 անուններից, իսկ դրանց զբաղեցրած պաշտոնների կամ պատմական իրադարձութ-յունների շարքը՝ համապատասխանաբար դարձել են 6 կամ 7: Ամեն դեպքում, այդ առաջադրանքների կատարման սկզբունքը նույնն է: Բացառելով երկրորդ շարքի ավելորդ կետը՝ շրջանավարտը նախ կատարում է մնացած զույգերի համապատասխանեցում: Դրանից հետո ստացած պատասխանը նա համեմատում է առաջադրանքում տրված հնարավոր պատասխանի չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

Մնացած երեք առաջադրանքները (67, 79-80) աստիճանաբար բարդացող աղյուսակներ են: Դրանց պատասխանելը շրջանավարտից պահանջում է ավելի մեծ գիտելիքներ համադրելու ունակություն: Դրանցից երկուսը իրադարձութ-յունների, տարեթվերի և պատմական գործիչների (կամ տեղանունների) շարքեր են:

67 առաջադրանքին պատասխանելու համար առաջարկվում է հետևյալ սկզբունքը: Շրջանավարտն ըստ առաջին շարքի հերթականության կազմում է իր համոզմամբ ճիշտ չորս եռյակները: Դրանից հետո իր ստացած աղյուսակը նա համեմատում է առաջադրանքում տրված հնարավոր պատասխանի չորս տարբերակների հետ և ընտրում միակ ճիշտ պատասխանը:

79 առաջադրանքը 67-ից մի փոքր բարդ է և տարբերվում է նրանով, որ երկրորդ և երրորդ շարքերում առկա են հնարավոր պատասխանի մեկական ավելորդ տարբերակներ: Հետևաբար, որպես այդ առաջադրանքին պատասխանելու առաջին քայլ,





**67** Համապատասխանեցնել իրադարձությունը, վայրը, տարեթիվը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

| N | Իրադարձությունը | N | Վայրը | N | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հայ-թաթարական ընդհարումների սկիզբը | 1 | Ղարաքիլիսա | 1 | 1896 թ. հունվար |
| 2 | Հնչակյան կուսակցության պառակտումը | 2 | Վան | 2 | 1874 թ. |
| 3 | «Միություն ի փրկություն» կազմակերպության ստեղծումը | 3 | Լոնդոն | 3 | 1905 թ. փետրվար |
| 4 | «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծումը | 4 | Բաքու | 4 | 1872 թ. |

1)
| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 1 |
| 2 | 3 | 3 |
| 3 | 2 | 2 |
| 4 | 1 | 4 |

2)
| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 3 | 4 |

3)
| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 1 |
| 2 | 3 | 3 |
| 3 | 1 | 4 |
| 4 | 2 | 2 |

4)
| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 2 |

**68** Նշված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք տեղ են գտել հայ-արաբական 652 թ. պայմանագրում.

ա) Հայաստանն ընդունում էր խալիֆայության գերիշխանությունը:
բ) Արաբները խոստանում էին հայկական ռազմական ուժերը չօգտագործել իրենց հակառակորդների դեմ պատերազմներում:
գ) Հայ վաճառականներն իրավունք էին ստանում ազատ առևտուր կատարել խալիֆայության սահմաններում:
դ) Արաբները պարտավորվում էին պաշտպանել Հայաստանն արտաքին հարձակումներից:
ե) Հայաստանին էին վերադարձվելու արաբների գրաված տարածքները:
զ) Հայաստանը երեք տարով ազատվում էր հարկերից, իսկ հետագայում վճարելու էր այնքան, որքան կցանկանար:
է) Արաբները պարտավորվում էին վերականգնել ավերված հայկական եկեղեցիները:

1) ա, դ, զ
2) գ, դ, է
3) դ, ե, զ
4) բ, գ, դ

**64** Ո՞ր գրքից է հետևյալ կոչը.
«Խիզախությամբ եղեք, եղեք նմանվողներ մեր նախահոր՝ քաջ Արամի որդիներին, որ միգուցե թե այդպիսով կարողանանք վերագտնել մեր հայրենիքն Արարատյան»:

1) «Հովսեփ էմինի կյանքը և արկածները»
2) «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»
3) «Որոգայթ փառաց»
4) «Վերք Հայաստանի»

**65** **Հայ հոգևոր գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձությունների հետ.**

| | |
|---|---|
| 1) Հովսեփ Վայոցձորեցի | ա) 571-572 թթ. ապստամբությունը |
| 2) Հովհաննես Բ | բ) Վարդանանց պատերազմը |
| 3) Ներսես Մեծ | գ) Աշտիշատի ժողովը |
| 4) Ներսես Տայեցի | դ) Հռիփսիմեի տաճարի կառուցումը |
| 5) Սահակ Պարթև | ե) Զվարթնոցի տաճարի կառուցումը |
| 6) Հովհան Օձնեցի | զ) Հայոց գրերի գյուտը |
| | է) 719 թ. Դվինի եկեղեցական ժողովը |

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-զ, 6-է
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ, 5-զ, 6-ե
3) 1-բ, 2-է, 3-ե, 4-դ, 5-զ, 6-ա
4) 1-է, 2-ա, 3-գ, 4-դ, 5-զ, 6-բ

**66** **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոնների հետ.**

1) Ստ. Շահումյան
2) Վ. Լենին
3) Ե. Գեգեչկորի
4) Ա. Գյուլխանդանյան
5) Պ. Ավերյանով

ա) Արևմտահայերի Ազգային խորհրդի նախագահ
բ) Կովկասյան գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար
գ) Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսար
դ) Ռուսաստանի ժողկոմխորհի նախագահ
ե) Անդրկովկասի կոմիսարիատի նախագահ
զ) Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ

1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա, 5-գ
2) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-ա
3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-զ, 5-գ
4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ա





շրջանավարտին խորհուրդ է տրվում նախ որոշել և բացառել ավելորդ տարբերակները: Դրանից հետո շրջանավարտն առաջադրանքը լուծում է 67 առաջադրանքի տարբերակով:

80 առաջադրանքն ավելի բարդ է: Այն չորս շարք պարունակող աղյուսակ է: Առաջադրանքին պատասխանելու սկզբունքը նույնն է, ինչ նախորդներինը: Ըստ աղյուսակի առաջին շարքի հերթականության, շրջանավարտը պետք է կազմի համապատասխանեցված չորս քառյակներ, ստացված աղյուսակը համեմատի առաջադրանքում որպես հնարավոր ճիշտ պատասխաններ տրված աղյուսակների չորս տարբերակների հետ և ընտրի միակ ճիշտ պատասխանը:

# ԹԵՍՏ 1

## Ա մակարդակ

**1** **Ե՞րբ է տեղի ունեցել Գավգամելայի ճակատամարտը.**

1) Ք. ա. 334 թ.
2) Ք. ա. 331 թ.
3) Ք. ա. 190 թ.
4) Ք. ա. 53 թ.

**2** **Ե՞րբ են ստեղծվել հայոց գրերը.**

1) 505 թ.
2) 405 թ.
3) 415 թ.
4) 305 թ.

**3** **Ե՞րբ է գահակալել Աշոտ 2-րդը.**

1) 885 - 890 թթ.
2) 890 - 914 թթ.
3) 914 - 928 թթ.
4) 953 - 977 թթ.

**4** **Ե՞րբ է Կիլիկիայում հռչակվել հայկական թագավորություն.**

1) 1045 թ.
2) 1198 թ.
3) 1375 թ.
4) 1639 թ.

**5** **Ե՞րբ է էջմիածնում Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը հրավիրել գաղտնի ժողով.**

1) 1701 թ.
2) 1677 թ.
3) 1680 թ.
4) 1699 թ.

**6** **Երիտթուրքական կառավարության կողմից ե՞րբ է Կ. Պոլսում իրականացվել ավելի քան 600 հայ մտավորականների ձերբակալությունը.**

1) 1908 թ. հուլիսի 21-ին
2) 1914 թ. օգոստոսի 1-ին
3) 1915 թ. ապրիլի 24-ին
4) 1917 թ. հոկտեմբերի 24-ին

**7** **Ե՞րբ է տեղի ունեցել միացյալ և անկախ Հայաստանի հռչակումը.**

1) 1918թ. մայիսի 28-ին
2) 1919թ. մայիսի 28-ին
3) 1920թ. մայիսի 28-ին
4) 1921թ. մայիսի 28-ին





**60** **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը.**

ա) «Բարենպատակ ընկերության» ստեղծումը:
բ) «Հայրենասերների միության» ստեղծումը:
գ) Արևմտահայերի «Ազգային սահմանադրության» ընդունումը:
դ) Հնչակյան կուսակցության ստեղծումը:
ե) Սասունի դեպքերը քննող հանձնաժողովի ստեղծումը:
զ) Հայերի ջարդերը Տրապիզոնում և Բաբերդում:

1) բ
2) գ
3) դ
4) զ

**61** **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը.**

ա) Լեռնային Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը:
բ) Հայիեղկոմի մուտքը Հայաստան:
գ) Հայաստանի անկախության մասին հանրաքվեն:
դ) Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակումը:
ե) Համազանգեզուրյան առաջին համագումարը:
զ) Փետրվարյան ապստամբության սկիզբը Հայաստանում:

1) գ, դ
2) դ, զ
3) ա, ե
4) բ, դ

**62** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**
«Չերկնչենք և չվախենանք հեթանոսների բազմությունից, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության և քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

***Ո՞վ է վերը բերված խոսքերի հեղինակը.***

1) Վարդան Մամիկոնյանը
2) Վահան Մամիկոնյանը
3) Մուշեղ Մամիկոնյանը
4) Վասակ Մամիկոնյանը

**63** **Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:**
«Չերկնչենք և չվախենանք հեթանոսների բազմությունից, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության և քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

***Ո՞ր ճակատամարտի մասին են ասվել վերը բերված խոսքերը.***

1) Արծնիի
2) Ավարայրի
3) Ձիրավի
4) Ճարմանայի

**57** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնց պատճառով 1948 թվականից հետո զանգվածային հայրենադարձությունը կտրուկ նվազեց.**

ա) Սառը պատերազմի իրավիճակը:
բ) Հայրենադարձներին հանրային աշխատանքի մեջ ներգրավելը:
գ) Քաղաքական բռնաճնշումները:
դ) Նյութական-կենցաղային անբավարար պայմանները:
ե) Հայրենադարձներին ծանր հարկերի տակ դնելը:
զ) Հայրենադարձների ազատ տեղաշարժի արգելքը:

1) ա, բ, զ
2) ա, գ, դ
3) բ, դ, ե
4) դ, ե, զ

**58** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Ատրպատական-Մեդիայի գրավումը Տիգրան Մեծի կողմից:
բ) Տիգրան Մեծի զորքերի մուտքը Փյունիկիա և Պաղեստին:
գ) Արածանիի ճակատամարտը:
դ) Տիգրան Մեծի առաջին արշավանքը Կապադովկիա:
ե) Տիգրան Կրտսերի ապստամբությունը:
զ) Տիգրան Մեծի գահակալումը Անտիոքում:

1) ա, զ, դ, գ, բ, ե
2) դ, ա, զ, բ, գ, ե
3) բ, դ, ա, ե, զ, գ
4) ա, զ, գ, դ, ե, բ

**59** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Սյունիքի թագավորության առաջացումը:
բ) Տաշիր-Ձորագետի թագավորության առաջացումը:
գ) Վասպուրականի թագավորության հանձնումը Բյուզանդիային:
դ) Անիի թագավորության անկումը:
ե) Վանանդի թագավորության առաջացումը:
զ) Բյուզանդիայի կողմից Տայքի նվաճումը:

1) բ, ա, ե, գ, զ, դ
2) ե, բ, ա, զ, գ, դ
3) ե, ա, բ, դ, զ, գ
4) բ, ե, ա, զ, դ, գ



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**8** **Ե՞րբ է հիմնադրվել Հայաստանի գիտությունների ակադեմիան.**

1) 1937 թ.
2) 1941 թ.
3) 1943 թ.
4) 1947 թ.

**9** **Ծովի մակերևույթից ի՞նչ միջին բարձրություն ունի Հայկական լեռնաշխարհը.**

1) 1000-1200 մ
2) 1300-1400 մ
3)1500-1800 մ
4) 2000-2400 մ

**10** **Ինչպե՞ս է կոչվում Անանիա Շիրակացու աշխատությունը.**

1) «Հայոց պատմություն»
2) «Աշխարհացույց»
3) «Իմաստասիրության սահմանումը»
4) «Եղծ աղանդոց»

**11** **Հայոց ո՞ր կաթողիկոսը Աշոտ 1-ին Բագրատունուն օծեց թագավոր.**

1) Գևորգ Գառնեցին
2) Զաքարիա Ձագեցին
3) Անանիա Մոկացին
4) Ներսես Շնորհալին

**12** **Ո՞վ էր Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադիրը.**

1) Ռուբեն 1-ինը
2) Մլեհը
3) Լևոն 1-ինը
4) Թորոս 1-ինը

**13** **1828 թ. մարտին ստեղծված Հայկական մարզի մեջ ո՞ր տարածքը չէր մտնում.**

1) Երևանի խանությունը
2) Օրդուբադի օկրուգը
3) Նախիջևանի խանությունը
4) Կարսի մարզը

**14** **Ո՞վ էր Սասունի 1894 թ. ապստամբության ղեկավարը.**

1) Մուրատը (Համբարձում Պոյաճյան)
2) Եղիշե քահանա Խաչատրյանը
3) Քրիստափոր Միքայելյանը
4) Խաչատուր Կերեկցյանը

**15** **Ո՞վ էր Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետը.**

1) Անդրանիկը
2) Հովհաննես Քաջազնունին
3) Արամ Մանուկյանը
4) Ալեքսանդր Խատիսյանը

**16** **Նշված կոթողներից որի՞ հեղինակն է քանդակագործ Լևոն Թոքմաջյանը.**

1) Սասունցի Դավթի արձանի
2) Ստեփան Շահումյանի մոնումենտի
3) Միքայել Նալբանդյանի արձանի
4) Մարտիրոս Սարյանի արձանի

**17** **Ինչպե՞ս է կոչվել նախարարական տոհմերի հատուկ պաշտոնական ցուցակը.**

1) «Աշխարհաժողով»
2) «Գահնամակ»
3) «Հայրենիք»
4) «Ազատանի»

**18** **Ի՞նչ է նշանակում սղնախ.**

1) ռազմական խորհուրդ
2) պաշտպանական ամրոց
3) թուրքական զորանոց
4) զինանոց

**19** **Քաղաքների անունները դասավորել ըստ դրանց հիմնադրման հաջորդականության.**

ա) Արշակավան
բ) Արտաշատ
գ) Երվանդաշատ
դ) Տիգրանակերտ

1) ա, բ, դ, գ  2) բ, ա, դ, գ  3) դ, բ, ա, գ  4) գ, բ, դ, ա

**20** **Հայկական դինաստիաները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հեթումյաններ
բ) Բագրատունիներ
գ) Ռուբինյաններ
դ) Արշակունիներ

1) ա, բ, դ, գ  2) բ, գ, ա, դ  3) գ, ա, բ, դ  4) դ, բ, գ, ա





**54** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.**

1) Հայաստանի խորհուրդ
2) մինիստրների խորհուրդ
3) զեմստվո
4) երդվյալ ատենակալների դատարան

ա) արդարադատության մարմին
բ) տեղական ինքնակառավարման մարմին
գ) զինվորական մարմին
դ) իշխանության բարձրագույն գործադիր մարմին
ե) իշխանության բարձրագույն օրենսդիր մարմին

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա
3) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ

**55** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսացել են Վահանանց պատերազմի պատճառ.**

ա) Հավատուրացության խրախուսումը պարսիկների կողմից:
բ) Հարկերի ծանրացումը:
գ) Հայաստանում պարսիկների կատարած վարչական նոր փոփոխությունները:
դ) Մարզպանի պաշտոնը պարսիկներին հանձնելը:
ե) Հին նախարարական տների իրավունքների ոտնահարումը:
զ) Դվինում կրակապաշտության համար ատրուշան կառուցելը:

1) բ, դ, զ  2) ա, բ, ե  3) ա, գ, դ  4) գ, ե, զ

**56** **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսացել են 10-14-րդ դարերի հայկական մշակույթի վերելքի նախադրյալ.**

ա) Դեպի Հայաստան քոչվոր ցեղերի զանգվածային արշավանքները:
բ) Հայերի և խաչակիրների համագործակցությունը:
գ) Հայոց պետության կողմից կրթության, գիտության և արվեստի հովանավորումը:
դ) Բազմաբնույթ կապերի հաստատումը հարևան երկրների հետ:
ե) Երկրի տնտեսական կյանքի վերելքը, քաղաքային կյանքի վերածնունդը:
զ) Բյուզանդական եկեղեցու աջակցությունը:

1) ա, բ, ե  2) ա, գ, դ  3) դ, ե, զ  4) գ, դ, ե

Բ մակարդակ

**51** **Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ.**

1) Արշակ 2-րդի օրոք պատժվեց Ռշտունի նախարարական տոհմը:
2) Արևելյան Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը մտնում էին հյուսիսային քուստակի մեջ:
3) «Աշխարհացույցում» նկարագրված են այն ժամանակվա հայտնի օվկիանոսներ Ատլանտյանը և Հնդկականը:
4) Անցնելով Կուր գետը, մազքութները հասնում են կենտրոնական Այրարատ նահանգը և գրավում Վաղարշապատ մայրաքաղաքը:

**52** **Ի՞նչ էր ազդարարում Դաշնակցությունը 1890 թ. «Մանիֆեստ»-ով.**

1) Իր գլխավոր խնդիրն է Արևմտյան Հայաստանում հայկական անկախ պետության ստեղծումը:
2) Նվիրվում է արևմտահայության ազատագրման վեհ գործին և ուխտում մինչև արյան վերջին կաթիլը կռվել հայրենիքի ազատության համար:
3) Իր մոտակա խնդիրն է թուրքական սուլթանի, պարսից շահի և ռուսական ցարի տիրապետությունից ազատել հայ ժողովրդին:
4) Իր նպատակն է Արևելյան Հայաստանն ազատագրել ռուսական տիրապետությունից:

**53** **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1) խարաջ
2) աշար
3) կոռ ու բեգար
4) մաքս

ա) վաճառականներից գանձվող հարկ
բ) անասունների և արոտավայրերի համար գանձվող հարկ
գ) հացահատիկից գանձվող հարկ, որը կազմում էր բերքի 1/10 մասը
դ) ոչ իսլամ հպատակներից զինվորական ծառայության փոխարեն գանձվող հարկ
ե) կալվածատիրոջ համար կատարվող պարտադիր աշխատանք

1) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ
2) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա





**21** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Գեորգիևյան դաշնագրի կնքումը
բ) Եկեղեցական կանոնադրության (պոլոժենիե) ընդունումը
գ) Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումը
դ) Բեռլինի կոնգրեսը

1) դ, բ, գ, ա
2) բ, ա, գ, դ
3) ա, գ, բ, դ
4) գ, ա, դ, բ

**22** **Մշակութային օջախները դասավորել ըստ դրանց ստեղծման հաջորդականության.**

ա) Օպերայի և բալետի պետական թատրոն
բ) Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոն
գ) Ռուսական դրամատիկական թատրոն
դ) Պատանի հանդիսատեսի թատրոն

1) գ, ա, բ, դ
2) ա, դ, գ, բ
3) բ, դ, գ, ա
4) բ, գ, ա, դ

**23** **Ե՞րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը.**

1) 481 թ. մայիսի 26-ին
2) 451 թ. մայիսի 26-ին
3) 484 թ. մայիսի 26-ին
4) 571 թ. մայիսի 26-ին

**24** **Ո՞ր դարում է հիմնվել Գլաձորի համալսարանը.**

1) 11-րդ
2) 12-րդ
3) 13-րդ
4) 14-րդ

**25** **Ե՞րբ են սկսվել Առաքելոց վանքի կռիվները.**

1) 1901 թ. նոյեմբերի 3-ին
2) 1896 թ. հունիսի 3-ին
3) 1904 թ. ապրիլի 1-ին
4) 1896 թ. հունվարին

**26** **Ե՞րբ են սկսվել Փարիզի խաղաղության կոնֆերանսի աշխատանքները.**

1) 1918 թ. հոկտեմբերի 30-ին
2) 1919 թ. հունվարին
3) 1920 թ. ապրիլին
4) 1920 թ. օգոստոսի 10-ին

27 Ո՞ր քաղաքի մոտ է Ք.ա. 53 թ. տեղի ունեցել ճակատամարտ հռոմեական ու պարթևական զորքերի միջև.

1) Արտաշատ 2) Խառան 3) Անտիոք 4) Մագնեսիա

28 Բագրատունիների արքունիքում բարձրաստիճան ո՞ր պաշտոնյային էին ենթարկվում արքայական կալվածքները, պետական գանձարանը, հարկահանները, այլ պաշտոնյաներն ու իշխանները.

1) սպարապետին
2) կաթողիկոսին
3) իշխանաց իշխանին
4) մարդպետին

29 Ո՞վ էր ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ ռուսական բանակի Կովկասյան կորպուսի հրամանատարը.

1) Հ. Լազարևը
2) Մ. Լորիս-Մելիքովը
3) Ա. Տեր-Ղուկասովը
4) Վ. Բեհբութովը

30 Ո՞վ էր 1918 թ. Գերմանիա մեկնած պատվիրակության ղեկավարը.

1) Ավետիս Ահարոնյանը
2) Համո Օհանջանյանը
3) Պողոս Նուբարը
4) Ալեքսանդր Խատիսյանը

31 Ինչպե՞ս էր կոչվում միջնադարյան Հայաստանի քաղաքներում միևնույն արհեստով զբաղվող արհեստավորների միավորվումը հատուկ կազմակերպության մեջ.

1) ավագների խորհուրդ
2) գիլդիա
3) մանուֆակտուրա
4) համքարություն

32 Անդրկովկասի Կոմիսարիատը 1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում ստեղծված իշխանության մարմին էր, որի խնդիրն էր.

1) հայ կամավորական ջոկատների կազմակերպումը
2) Խորհրդային Ռուսաստանից անկախ Անդրկովկասի կառավարման ապահովումը
3) խորհրդային իշխանության դիրքերի ամրապնդումն Անդրկովկասում
4) ժամանակավոր կառավարության անունից երկրամասը կառավարելը



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

47 Ո՞ր պատմիչն է հետևյալ խոսքերի հեղինակը. «Պետք է ստույգը գրել, չեղածը չավելացնել, եղածները չպակասեցնել»:

1) Ղազար Փարպեցին
2) Փավստոս Բուզանդը
3) Սեբեոսը
4) Մովսես Խորենացին

48 Ո՞ւմ մասին են ռուս գրող Վ. Կորոլենկոյի հետևյալ խոսքերը. «... և նրա ընկերների անունները, որպես իսկական խիզախության օրինակ, կանցնեն հասարակության պատմության մեջ»:

1) Մարգար Առուստամով
2) Ջակոմո Չամչյանի
3) Անդրեաս Արծրունու
4) Հովհաննես Ադամյանի

49 Համապատասխանեցնել.

1) Աստղիկ
2) Վահագն
3) Անահիտ
4) Արամազդ

ա) աստվածների հայրը
բ) սիրո և գեղեցկության աստվածուհին
գ) կայծակի, պատերազմի, որոտի աստված
դ) հայոց աշխարհի հովանավորը, ամենայն բարի հատկությունների մայրը
ե) բնության աստվածը

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
3) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ

50 Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվան հետ.

ա) «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»
բ) «Հայոց պատմություն»
գ) «Բժշկարան»
դ) «Աղվանից երկրի համառոտ պատմություն»

1) Միքայել Չամչյան
2) Մովսես Բաղրամյան
3) Եսայի Հասան-Ջալալյան
4) Պետրոս Քալանթարյան
5) Ստեփանոս Շահումյան

1) ա-2, բ-1, գ-4, դ-3
2) ա-1, բ-2, գ-4, դ-5
3) ա-3, բ-5, գ-2, դ-4
4) ա-4, բ-3, գ-5, դ-1

**43** **Նշվածներից ո՞րն էր 703 թ. հակաարաբական ապստամբության դրդապատճառը.**

1) Արաբների հարկային ծանր քաղաքականությունը:
2) Հայ իշխանական տները ոչնչացնելու արաբ ոստիկանի մտադրությունը:
3) Հայերին կրոնափոխելու արաբների մտադրությունը:
4) Լայն թափ ստացած պավլիկյան շարժումը:

**44** **1920-ական թվականների վերջերին գյուղատնտեսության զարգացման վրա ի՞նչը բացասաբար ազդեց.**

1) Կառավարման վարչահրամայական եղանակին անցնելը:
2) Ունևոր (կուլակ) գյուղացու առկայությունը:
3) Բանդիտական շարժումը:
4) Գյուղական մտավորականության խավի ձևավորումը:

**45** **Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Ջիրավի ճակատամարտը:
բ) Հովհաննես Արշակունու գլխավորած ապստամբությունը Առաջին Հայքում:
գ) Ներսեհապատի ճակատամարտը:
դ) Հուստինիանոսի դեմ հայ իշխանների կազմակերպած դավադրությունը:
ե) Ակոռիի ճակատամարտը:

1) ա, ե, գ, բ, դ
2) ե, գ, ա, դ, բ
3) բ, ա, գ, ե, դ
4) ա, գ, ե, դ, բ

**46** **Պետական կազմավորումները դասավորել դրանց ստեղծման ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) ԽՍՀՄ
բ) ՀԽՍՀ
գ) ԱԽՍՀՖՄ
դ) ԱՊՀ
ե) ԼՂՀ

1) բ, գ, ա, ե, դ
2) բ, դ, ա, գ, ե
3) դ, բ, ա, ե, գ
4) ա, գ, բ, ե, դ





**33** **Ի՞նչ հետևանք ունեցավ Ասորեստանի Թիգլաթպալասար 3-րդ թագավորի արշավանքը դեպի Ուրարտու.**

1) Թիգլաթպալասար 3-րդը սպանվեց ճակատամարտում:
2) Տուշպա մայրաքաղաքը ավերվեց, բայց նրա միջնաբերդը չգրավվեց:
3) Գրավվեց ու կողոպտվեց Խալդի աստծո գլխավոր տաճարը:
4) Թիգլաթպալասար 3-րդը պարտություն կրեց և հեռացավ Ուրարտուից:

**34** **Ինչո՞ւ էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսը դեմ Հովսեփ Էմինի ծրագրերին: Որովհետև …**

1) դեմ էր Հայաստանի ազատագրմանը:
2) անիրագործելի էր համարում եղած ուժերով Թուրքիայի և Պարսկաստանի դեմ հաղթանակի հասնելը:
3) ուներ թուրքամետ դիրքորոշում:
4) դեմ էր Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելուն:

**35** **Հայոց արքաների անունները դասավորել ըստ նրանց կառավարման հաջորդականության.**

ա) Պապ
բ) Արշակ 2-րդ
գ) Վարազդատ
դ) Վռամշապուհ
ե) Տրդատ 3-րդ

1) ե, բ, ա, գ, դ
2) բ, ա, գ, ե, դ
3) ե, բ, ա, դ, գ
4) ա, բ, ե, գ, դ

**36** **Արցախյան շարժման ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի համատեղ որոշումը ԼՂԻՄ-ին 400 մլն ռուբլի տրամադրելու վերաբերյալ:
բ) ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանի որոշման ընդունումը:
գ) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի գումարումը՝ ԼՂԻՄ-ի հարցը քննարկելու նպատակով:
դ) ԼՂՀ-ում միջազգային դիտորդների ներկայությամբ անցկացված անկախության հանրաքվեն:

1) դ, բ, ա, գ 2) բ, ա, գ, դ 3) բ, գ, ա, դ 4) ա, դ, բ, գ

**37** **Հայոց ո՞ր արքայի կառավարման շրջանին են վերաբերում Մովսես Խորենացու հետևյալ խոսքերը.**

«... հայոց աշխարհում անմշակ հող չմնաց՝ ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, այնքան էր շենացել երկիրը»:

1) Մենուայի
2) Տիգրան 1-ինի
3) Արտաշես 1-ինի
4) Տիգրան 2-րդի

**38** **Ո՞ր իրադարձության ժամանակ են Մխիթար Սպարապետը և Տեր Ավետիսը դիմել հայ զինվորներին հետևյալ կոչով.**

«Արիացեք, մի երկնչեք, հետևեցեք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»:

1) Մեղրիի ճակատամարտի
2) Ձևայի բերդի գրավման
3) Հալիձորի պաշարման
4) Որոտնու բերդի գրավման

**39** **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել պաշտոնների հետ.**

ա) Վահրամ Պահլավունի
բ) Աշոտ 2-րդ
գ) Իվանե Զաքարյան
դ) Ներսես Տայեցի
ե) Բագարատ Բագրատունի

1) սպարապետ
2) Հայոց իշխան
3) շահնշահ
4) թագաժառանգի խնամակալ

1) ա-4, բ-3, գ-1, դ-2
2) բ-2, գ-4, դ-1, ե-3
3) ա-2, գ-4, դ-3, ե-1
4) ա-1, բ-3, գ-4, ե-2



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**40** **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1) ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի որոշման ընդունումը Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու վերաբերյալ:
2) Լոզանի կոնֆերանսը:
3) Պոտսդամի կոնֆերանսը:
4) Հայերի աքսորը Ալթայի երկրամաս:

ա) 1949 թ.
բ) 1921 թ.
գ) 1922-1923 թթ.
դ) 1945 թ.
ե) 1937 թ.

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
3) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ
4) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ

**41** **Նշված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա) Փառանձեմ թագուհին արքայորդի Պապի հետ փակվում է Ողական ամրոցում:
բ) Սուրեն մարզպանը սպանեց Վահան Մամիկոնյանին:
գ) Արաբների երրորդ արշավանքը դեպի Հայաստան տեղի է ունեցել 650 թ.:
դ) Տիրանի օրոք հանդես է գալիս Հայր մարդպետը:
ե) Վասակ Սյունու զորախումբը հասավ մինչև Ճորա պահակի ամրությունները:

1) ա, բ, ե
2) բ, դ, ե
3) ա, բ, գ
4) ա, գ, դ

**42** **19-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանը բաժանված էր վեց նահանգների (վիլայեթների)՝ Կարսի, Ախալցխայի, Էրզրումի, ………………., Դիարբեքիրի և Սեբաստիայի: Ո՞ր վիլայեթն է բաց թողնված.**

1) Խարբերդի
2) Վանի
3) Տրապիզոնի
4) Բայազետի